

14-15(653-654)

16.05.2022

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուքին եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՄԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ՃԻՇՏ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎՍ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ե

Հաղթանակը ոգևորում է, պարտությունը՝ պարտավորեցնում: Այս հանրաճանաչ թեզն է վերջին երեսուն տարում եղել մեր գաղափարաբանության առանցքում: Ձուտ հոգեբանական առումով ոգևորությունն այնքանով է թերի, որ թուլացնում է ժողովրդի զգոնությունը, ձևավորում է մի այնպիսի քաղաքական նարցիսիզմ, որն ի վերջո վերածվում է ներքին հակառակորդի: Իսկ երբ դրսի և ներսի հակառակորդները «միավորվում» են, պարտությունն անխուսափելի է դառնում:

Տվյալ ճշմարտությանը մենք հանգել ենք հատկապես 2020-ի աշնանային պատերազմում, իսկ դրանից արժանի դասեր քաղում ենք, թե ոչ՝ մեզանից յուրաքանչյուրը թող յուրովի գնահատի: Անվիճելի են զորահանգումն է. մենք ժամանակ և իրավունք չունենք անտեսելու մեր թույլ տված սխալները, այլապես հաջորդ պարտությունը կլինի վերջնական կործանարար:

Երբ սկսում ենք ցավոտ թեմաներից խոսել, դա երբեմն որակվում է որպես գլխավոր խնդիրներից շեղում: Իսկ ո՞րն է գլխավոր խնդիրը, դիցուք, մանկավարժի պարագայում: Իրավացիորոն կասեք՝ ուսումն ու դաստիարակությունը, որը մեծ հաշվով մասնագիտական առաքելություն է: Մինչդեռ, խոստովանենք, այդ առաքելության մեջ քաղաքական բաղադրիչ էլ կա, որովհետև ապագա քաղաքացին ձևավորվում է նախ և առաջ դպրոցում: Ասել է թե՛ ճիշտ դաստիարակելը նույնպես քաղաքականություն է, և եթե արտոնյալության հանրային հանդուժումը գնահատում ենք իբրև պարտության հերթական պատճառ, նշանակում է՝ ընդունում ենք, որ մանկավարժը ևս իր մասնագիտական առաքելության մեջ թերացել է:

Ոգևորված 1990-ականների սկզբներին ունեցած հաղթանակներով՝ մենք թույլատրել և հանդուրժել ենք հասարակության մեջ արտոնյալ շերտի ձևավորումը՝ չգիտակցելով, որ հասարակության երկփեղկվածությունը, կամ որ նույնն է ասել՝ միասնական տրոհումը, մեր հետագա ծախսողունների բուն պատճառը հանդիսացավ: Դրանից պիտի խուսափել՝ բացառելով հանրության ինչ-որ մի հատվածի վաստակի գերազնահատումը: Պետության առաջ բուրդը հավասարապես իրավատեր ու պարտավոր են, և ամեն մեկը պետք է իր պարտքը կատարի ուժերի ներածին չափով: Բայց երբ որևէ մեկի վաստակը գերազնահատվում է, և նրան օրենքով սահմանվածից (նաև՝ բարոյապես) ավելի իրավունքներ են «շնորհվում», անխուսափելի է դառնում հասարակության տրոհումը:

Մեր գաղափարական դաստիարակության մեջ, թերևս, այս հրամայականը պետք է հետայսու գերակա դարձնել, այլընտրանք պարզապես չունենք:

«ԼՈՒՄԱՐԱՐ»

ԿՐԱՆԴԻՊԵՆՔ ՇՈՒՇԻՈՒՄ ԿԱՄ՝ ԻՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ԱՊԱԳԱՅԻ ՇԵՏ



Այս սերունդը Շուշիի բարձունքին դեռ իր հաղթական պարը կպարի

Այս երկխոսությունը կարող էր և չլինել, բայց եղավ ու շատ տպավորիչ էր: Անկեղծ ասեմ՝ ապագայի հանդեպ նոր հույսերով լցվեցի: Երկխոսությունը մայրաքաղաքի դպրոցներից մեկում սովորող շուշեցի մի պատանյակի հետ էր, որը հրաժարվում էր իր տարիքն ասել, բայց դա երևի այնքան էլ էական չէ: Հուսամ՝ դուք էլ կտպավորվեք ինձ պես:

- Որտեղացի՞ ես, տղա:
- Շուշեցի եմ:
- Հիմա Ստեփանակերտում ես բնակվում:
- Հա:
- Այստեղ լա՞վ է քեզ համար, հարմարվե՞լ ես արդեն:
- Չէ, Շուշիում ավելի լավ էր, այնտեղ ես ընկերներ ունեի: Հիմա նրանք տարբեր տեղեր են ապրում, բայց մենք պայմանավորվել ենք նորից հանդիպել Շուշիում:

- Ե՞րբ:
- Երբ մեծանանք: Իմ հայրիկը պատերազմում վիրավորվել է, նա այլևս չի կարող կռվել: Ես պիտի շուտ մեծանամ, որ գնամ Շուշից ազատագրեմ:
- Ընկերներիդ հետ պիտի գնա՞ս:
- Ընկերներս հետ: Ուրիշներն էլ կմիանան մեզ:

- Որտեղի՞ց եմ գալու նրանք:

- Տարբեր տեղերից:
- Ծանաչո՞ւմ ես նրանք:
- Չէ, բայց ցուցակով անունները գիտեմ:

- Ի՞նչ ցուցակ:
- Չեմ ասի:

- Լավ, մի ասա: Իսկ ինձ ձեզ հետ կվերցնե՞ք:

- Չէ: Կգաք Շուշի, երբ այն արդեն ազատած կլինենք:

- Դա ե՞րբ կլինի:
- Երբ մեծանանք:

- Քանի՞տարեկան ես հիմա:
- Երբ ժամանակը գա՝ մեծացած կլինեմ:

- Պարզ է: Ուրեմն՝ կհանդիպենք Շուշիում:

- Կհանդիպենք: Ես եկեղեցու մոտ էի ապրում: Մեր շենքը թուրքերը քանդել են, բայց ոչինչ, մենք նորը կկառուցենք:

Այն ժամանակ ես արդեն մեծ կլինեմ, ու ընկերներիս հետ նոր շենքեր կկառուցենք:

- Աստված բոլորիդ պահպան, տղա:

- Աստված Շուշիում է մնացել, պիտի նրան փրկենք, որպեսզի մեզ միշտ պահպանի:

- Կպահպանի, տղա, շարունակիր հավատալ:

**Ջրույցը գրառեց
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

ՍԱԿԱՅՆ ԿԲԱՑՎԻ ՕՐԸ ՔՈ ՊԱՅՏԱՌ

ՇՈՒՇԻ

Ինձ տուն կանչող փարոս ես դու,
Երազներիս հրաշքն ես դու,
Մեր փառքերի պսակն ես դու,
Բերդաքաղաք չքնաղ Շուշի:

Դու ինձ համար սուրբ մի հավատ,
Մորս ծայրով միշտ տուն կանչող,
Դու քարեղեն մի վեհ արձան,
Մեր անցյալի վկա դարձած սուրբ մի կոթող:

Իմ մանկության կապույտ երազ,
Իմ հույսերի շղթա մի պարզ,
Դու սրբազան մի պատմություն,
Ամեն հայի հպարտություն:


Իմ հեքիաթի հերոսն ես դու՝
Յոթ գլխանի դեհն հաղթող,
Եթե անգամ չարն է հաղթել,
Հույսը երբեք քեզ չի լքել:

Դու ինձ համար մի նոր Մասիս,
Չար թշնամուն դարձած գերի,
Լույս հավատող արթուն պահում,
Լուսաբացին ես միշտ սպասում:

Գիտեմ, վերքերդ խորն են շատ,
Էլ չի լսվում դողանքդ խորիստ,
Զավակներդ չեն հանդուրժում
Պարտությունը քո՝ մատնությամբ:

Սակայն կբացվի օրը քո պայծառ,
Կհնչեն երգեր փառքիդ մվիրված,
Նորից կլսվի աղոթքը քո տան,
Որպես ավետիս մեր վառ գալիքի:

ԲԷԼԱ ԲԱԲԱՅԱՆ
Ստեփանակերտի հ. 9
հիմնական դպրոցի ուսուցչուհի



Այս մշուշն էլ կանցնի...

ԱՐՑԱԽՆ ԱՊՐՈՒՄ Ե ԱՆԽԱՐԶՆ ԱՌԱՆՅ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ԱՅ ԿԳՄՍՆ կրթության պետական տեսուչ Ռուբեն Օսիպովի նախաձեռնությամբ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների կողմից անց է կացվել «Արցախն ապրում է» խորագրով միջոցառումների շարք՝ նվիրված 44-օրյա պատերազմում նահատակված հայորդիների հիշատակին: «Լուսարար»-ի նախորդ համարում զետեղել ենք հ. 2 և հ. 1 հիմնական դպրոցների ելույթները՝ «Ռեքվիեմ» և «Ոգեկոչում»: Այս համարում կանդիդատները մյուս ուսումնական հաստատություններում անցկացված միջոցառումներին:

«Արցախն ապրում է» ծրագրի ներկայացման հերթական վայրը Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցն էր: Ներկա էին իշխանությունների, հասարակայնության, Արցախում ռուսական համայնքի, ռուս խաղաղապահ ուժերի ներկայացուցիչներ:

Տարբեր դասարանների աշակերտներ ամուցեցին հայ և ռուս գրողների ստեղծագործություններից, կատարեցին երկու ժողովուրդների երգեր ու պարեր: Հաղորդավարները թվարկեցին Հայաստանի մասին ռուս գրողների, մասնավորապես՝ Վ. Բրյուսովի, Ա. Բելովի, Ա. Բիտովի, Վ. Գրոսմանի ստեղծագործությունները:

Ներքո: Արտասանեցին ժամանակակից նիժնի-նովոգորդյի բանաստեղծ, Արցախի բարեկամ Վ. Կոնոպլովի «Սիրելի Հայաստանը ռուսական ձևով» բանաստեղծությունը:

Դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանն անդրադարձավ Ռուսաստանի հետ Ղարաբաղի պատմական կապերին, ընդգծեց ռուս խաղաղապահների դերը Արցախում խաղաղության և կայունության պահպանման գործում:

ԱՅ ԿԳՄՍ նախարար Ա. Հակոբյանը բարձր գնահատեց «Արցախն ապրում է» միջոցառումների նշանակությունը, շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին, ուսուցիչներին, աշակերտներին:

ԱՅ ԿԳՄՍՆ ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ Ռ. Օսիպովը արձանագրեց, որ Արցախում միշտ առանձնահատուկ վերաբերմունք է եղել ռուսերենի նկատմամբ՝ ընդգծելով ուսուցիչների մեծ դերը ռուսաց լեզվի, ռուսական մշակույթի նկատմամբ մատաղ սերնդի մոտ սեր և հարգանք



սերմանելու գործում, նշեց, որ ուսումնական հաստատություններում սիրով են ուսումնասիրում ռուսերենը, և նրա դասավանդման խնդիրները կառավարության ուշադրության կենտրոնում են: Մեջբերեց ռուս նշանավոր գրող Կիմ Բակչիի խոսքը. «Ով սիրում է ուրիշ ժողովրդի, նա դրանով բարձրացնում է իր ժողովրդի պատիվը»:



ԵՂԻՅԻ ԽԱՂԱՊՈՒԹՅՈՒՆ

Այս խորագիրն էր կրում «Արցախն ապրում է» Ռուսական խոսքի շրջանակներում անցկացվող ասմունքողների մրցույթը ավագ դպրոցների միջև, որն անցկացվեց Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցում: Մասնակցեցին մայրաքաղաքի հ. 3, 8, 11 և ֆիզմաթ դպրոցների աշակերտները: Թեման ազատ էր, բայց ձևաչափը մնացել է նույնը. յուրաքանչյուր թիմում մեկ հաղորդավար, երեք ասմունքող, որոնք պետք է կատարեին արձակ և չափածո ստեղծագործություններ, եզրափակիչ մաս՝ թիմի ընտրությանը:



Բացման խոսքով հանդես եկավ հ. 3 դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Ստելլա Առաքելյանը. «Ես չեմ գալիս մանկությունից, ես գալիս եմ պատերազմից». հեռավոր 80-ական թվականներին ես այս տողերը, որպես դպրոցական, բարձր ամբիոնից արտասանում էի մայիսյան տոներին՝ չգիտակցելով դրանց իմաստը, որովհետև ապրում էիք այնպիսի ժամանակներում, երբ չկար պատերազմ, ու մենք երջանիկ մանկություն ունեինք: Իսկ այսօր այս դալիչիում նստած են երեխաներ, որոնք իրենց 15-16 տարում տեսել են 2 պատերազմ, ռմբակոծություններ, էվակուացիա, հարձականքների կորուստ: Երբևիցե վերջ կդրվի»

այս ամենին»: Եվ ապա շարունակեց, որ միջոցառման մասնակիցները եկել են մերժելու պատերազմը, ասելու, որ ուզում են ապրել՝ չճոռանալով անցյալը, այն տղաներին, ովքեր իրենց գլուխն են դրել հայրենիքի փրկության զոհասեղանին: Ապրել իսկական կյանքով՝ հանուն այսօր ապրող երեխաների, մտածելով ապագայի մասին, հանուն այն սերնդի, որը պետք է ծնվի:

Ասմունքողների գնահատելու համար կազմվել էր մասնագետների հանձնախումբ՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության

դասախոս, ԱՅ վաստակավոր մանկավարժ Վերա Խաչատրյանի գլխավորությամբ (հանձնախմբի անդամներ՝ Անահիտ Պողոսյան՝ հ. 7 դպրոցի տնօրեն, Ինգա Համբարձումյան՝ ԱրՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, մ. գ. թ., Անահիտ Թավադյան՝ քաղաքային մեթոդիկավորման նախագահ, հ.5 դպրոց, Լիլիթ Թովմասյան՝ հ. 1 դպրոցի ուսմասվար):

Ներկաները լռության թուպով հարգեցին պատերազմում նահատակված քաջորդիների հիշատակը:

Թիմերն արտասանեցին հայ և ռուս գրողների ստեղծագործություններից, այդ թվում՝

արցախցի ռուսալեզու գրող Աշոտ Բեգլարյանից և բլոգեր Սևակ Ասրյանից՝ ցուցադրելով անաղարտ ռուսերեն, մաքուր առոգանություն:

Ամփոփելով մրցույթի արդյունքները՝ հանձնախումբը որոշեց երկուսական 1-ին և 2-րդ տեղերի համար մրցանակներ շնորհել: 1-ին տեղին արժանացան ֆիզմաթ և հ. 3, 2-րդ տեղին՝ հ. 8 և հ. 11 դպրոցների թիմերը՝ պարգևատրվելով ԱՅ ԿԳՄՍՆ պատվոգրով: Գրող Ա. Բեգլարյանը լավագույն ասմունքողներին նվիրեց իր գրքերը:

Միջոցառումը համակարգող Ռ. Օսիպովն իր գոհունակությունը հայտնեց մասնակիցների արտասանական բարձր մակարդակի առնչությամբ՝ նշելով, որ երեխաների ելույթներից երևաց արցախցիների վերաբերմունքը ռուսերենի նկատմամբ: Նրա կարծիքով, իրեն երջանիկ է համարում յուրաքանչյուր ուսուցիչ՝ իր առջևը նստած տեսնելով այսպիսի երեխաների, որոնք Արցախի ապագան են, և այսպիսի սերնդի շնորհիվ Արցախը կապրի: Խոստովանեց, որ ավելի քան 20 տարի շրջելով Արցախի դպրոցներում՝ ոչ մի տեղ չի հանդիպել, որ ուսուցիչը աշակերտին սովորեցնի ատել, ընդհակառակը, սովորեցնում է սիրել իր հայրենիքը, ժողովրդին ու հենց դրանով էլ նա հաղթելու է:



ՏԱՂԱՆՂԱՎՈՐ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՏՎԵՅԻՆ ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ



«Արցախն ապրում է» տասնօրյակին համերգային ծրագրով մասնակցեց և նահատակների հիշատակին հարգանքի տուրք մատուցեց ու Արցախի հարատևությունը խորհրդանշեց Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցը: Նրա շնորհալի սաներն իրենց տաղանդը ցույց տվեցին տարբեր գործիքներով կատարումներով, երգելով: Դպրոցի տնօրեն Արթուր Պետրոսյանը հպարտորեն նշեց, որ նրանք միջազգային մրցույթների դափնեկիրներ են, սակայն դպրոցի ամբողջ ներուժը չեն ներկայացնում. սաների մի մասն այդ օրերին երևանում էր մրցույթների մասնակցելու նպատակով: Ապրողներս այսօր կարողանում ենք ընկղմվել երաժշտության կախարհական աշխարհը՝ շնորհիվ այն տղաների, ովքեր իրենց գլուխն են դրել հայրենիքի ազատության զոհասեղանին: Մեր պարտքն է բոլորին հիշել և շարունակել նրանց կիսատ թողած գործը: Միջոցառմանը ներկա՝ հանրակրթական դպրոցների ուսուցիչներին երաժշտական դպրոցի տնօրենը պատրաստակամություն հայտնեց համագործակցել ու աջակցել տարբեր միջոցառումներում:

«Արցախն ապրում է և կապրի» շնորհիվ այսպիսի տաղանդավոր երեխաների, որոնք մեզ տվեցին հույս, հավատ և սեր: Արցախը տաղանդավոր մարդկանց երկիր է: Հենց նմանների շնորհիվ Արցախում կյանքը շարունակվում է: Անկասկած բոլորիս համար այսօր ծանր է, բայց մենք պետք է մեզ հավաքենք: Գիտենք ինչերի միջով է անցել մեր ժողովուրդը 2020-ին, բայց ուժեղ ենք, մենք պետք է ապրենք և հիշենք մեր յուրաքանչյուր հերոսի: Արցախն ապրել է, ապրում է, կապրի: Եթե մենք այստեղ ենք, ուրեմն նա կապրի: Եթե մենք տեսնում ենք տաղանդավոր երեխաների, նշանակում է՝ կյանքը շարունակվում է»: միջոցառման համակարգող Ռ. Օսիպովն ամեն հանդիպման ժամանակ ընդգծում է այս գաղափարը և նրա իրականացման համար շեշտում ուսուցիչների դերը, որոնք ներդրումը մեծ է յուրաքանչյուր աշակերտի հաջողության մեջ: Արցախում ապրողները բոլորն են հերոս, քանի որ մեզանից յուրաքանչյուրի այստեղ լինելու շնորհիվ է ապրում Արցախը:

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐՃԱՆՆ ԱՊՐԵԼ Է, ԱՊՐՈՒՄ Է, ԿԱՊՐԻ. ՍԱ՛ՂԵՏՔ Է ԼԻՆԻ ԲՈԼՈՐԻՍ ՍՏՔԻ ԱՌԱՆՅՔԸ



Արցախում ավանդական դարձած Ռուսական խոսքի օրերը, որ անց է կացնում ԱՂ ԿԳՄՍ նախարարությունը, այս տարի անցավ «Արցախն ապրում է» կարգախոսով և նվիրված էր 44-օրյա պատերազմում զոհված հայորդիների հիշատակին: Միջոցառումների եզրափակիչ ակորդը, ինչպես ամեն տարի, տրվեց Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում համերգով: Ներկա էին պետական նախարար Ա.Բեգլարյանը, ԱՂ առաջին տիկին Ք. Հարությունյանը, ԿԳՄՍ նախարար Ա. Հակոբյանը:

Համերգը կազմված էր հայ մեծ կոմպոզիտոր և դաշնակահար Ամնո Բաբաջանյանի ստեղծագործություններից: Բաբաջանյանը ստեղծագործել է տարբեր ոճերով՝ դասական, փոփ, ջազ: Խորհրդային երկրի բազմաթիվ երաժշտական կոլեկտիվների և մեներգիչների երգացանկում նկատելի տեղ էին գտել նրա գործերը: Հատկապես արգասաբեր էր նրա համագործակցությունը Ռ. Ռոժդեստվենսկու, Ե. Եվտուշենկոյի, Ա.Վոզնեսենսկու հետ, ինչի արդյունքում ծնվեցին խորհրդային էստրադայի գոհարները: Նրա երաժշտությունը մի կողմից ազգային է («Ինչ էլ գրեմ, ստացվում է հայեցի»), - խոստովանել է կոմպոզիտորը, մյուս կողմից՝ ինտերնացիոնալ: Նա իրենով արտացոլում է հայ և ռուս ժողովուրդների մշակութային ամուր բարեկամությունը:

Համերգը մեկնարկեց «Իմ սիրտը լեռներում է» շեփորի նվագով, որը կատարեց միջազգային մրցույթների դափնեկիր Արսեն Սաֆարյանը: ԱՂ մշակույթի վաստակավոր գործիչ Սիմոն Սարգսյանը, երգիչ-երգչուհիները, քանոնահարներ, քոլեջի ուսանողներ և շրջանավարտներ ներկայացրին Ա. Բաբաջանյանի հիասքանչ ստեղծագործությունները:

Համերգային ծրագրի վերջին համարը՝ «Նոկտյուրն»-ը, սիմֆոնիկ նվագախմբի հետ Ա. Բաբաջանյանի մենակատարմամբ ներկայաներ ըմբռնչեցին տեսաձայնագրությամբ՝ հոտնկայս ծափահարելով մեծ կոմպոզիտորին:



Քոլեջի տնօրեն Ա. Սուլեյմանյանն ասաց, որ Արցախն ապրում է առանց մոռացման իրավունքի: Եվ կշարունակի ապրել, քանի որ մեր սուրբ հողը չի դադարել տաղանդավոր մարդիկ ծնելուց: Ծնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ նա առանձնահատուկ երախտագիտություն հայտնեց մանկավարժներին, քանի որ յուրաքանչյուր աշակերտի ամենափոքր հաջողության մեջ առկա է ուսուցչի մեծ աշխատանքը:

ԱՂ ԿԳՄՍՍ տեսուչ և միջոցառումների շարքը համակարգող Ռ. Օսիպովը շեշտեց՝ հայն ունի հզոր գեներացիան, նրանում ոգու, հաղթողի ուժն է: Այդպիսի տաղանդավոր սերունդ ունեցող ազգը կհարատևի, իսկ Արցախը ապրել է, ապրում է և կապրի. սա պետք է լինի յուրաքանչյուրի մտքի առանցքը:

ԱՂ ԿԳՄՍ նախարար Ա. Հակոբյանն ամփոփեց, որ Արցախն այսօր էլ քաջերի պակաս չունի, որոնք իրենց բազկի և խելքի ուժով ցանկալի սահման կգծեն:

ՃԱՆԱԳՆԵՔ ԱՆՅՅԱԼԸ, ԳՆԱՀԱՏԵՆՔ ՆԵՐԿԱՆ ԵՎ ԿԵՐՏԵՔ ԱՊԱԳԱՆ

Մայիսի 5-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում անփոփոխ «Հայրենիք» խորագրով ինտելեկտուալ խաղ-մրցույթը: Մեկնարկը տրվեց էր ապրիլի 21-ին, մասնակցում էր Ստեփանակերտի համրակրթական դպրոցների 11 թիմ, որից եզրափակիչ փուլ է անցել հինգը:



Մասնակիցներին ողջունելով և բարեմաղաքներ հղելով՝ ԱՂ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանն ասաց, որ հայերիս բախտ է վիճակվել պատմության քառուղիներում գոյատևել պատերազմների միջով, ու

տնօրինելու առումով: Եվ հույսով են, որ այս խաղ-մրցույթը կլինի ևս մեկ նշույլ, որ հնարավորություն կտա ավելի խորն ուսումնասիրելու Արցախի պատմությունը և միջազգային հարթակներում ներկայացնելու այն ամենը, ինչն անհրաժեշտ է հասցնել այդ աշյաններին: Մենք պատմական ազգ ենք և կերտել ենք մեր ուղին մեր

ցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր» աշխատությունից:

Խաղ-մրցույթն անցկացվեց 4 փուլով, որից վերջինը՝ թիմերի ավագների միջև:

Ամփոփելով արդյունքները՝ ժյուրիի նախագահ՝ ԱՂ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանն



երկրում», - ընդգծել է Ջ. Գասյանը: «Հայրենիք» ինտելեկտուալ խաղն էլ հենց այդ նպատակն է հետապնդում՝ մատաղ սերունդին դաստիարակել ազգային արժեհամակարգով, որի շնորհիվ ձևավորվում է հայրենա-

ասաց, որ գոհ է երեխաների իմացությունից. նրանք կարողացան ցուցադրել իրենց գիտելիքները: Ցուցաբերելով ակտիվ և մտածված խաղ՝ մրցույթում պատվավոր 1-ին հորիզոնականին արժանացավ ԵՊՂ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը ներկայացնող «Վարարակն» թիմը և պարզատրվեց գավաթով, 2-րդ հորիզոնականը նվաճեց Վ. Մեիրաբյանի անվան հ. 12 հիմնական դպրոցի «Պատանի արցախցիներ», իսկ 3-րդ տեղը՝ Ղ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցի «Գանձասար» թիմը:

Ինչպես մրցանակակիր, այնպես էլ եզրափակիչն մասնակցած՝ Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի «Փյունիկ» և Յու. Պողոսյանի անվան հ. 6 հիմնական դպրոցի «Արցախ» թիմերին Ջ. Գասյանը նվիրեց 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Խորեն Ղազարյանի «Տուրմի» գիրքը՝ համալրելու դպրոցների գրադարանները:

Միջոցառմանը երաժշտական համարներով ոգևորեցին Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի սաները:



թեպետև ունեցել ենք կորուստներ, կարողացել ենք նորից վեր հանել. «Նայելով ձեզ՝ ես ավելի ու ավելի եմ սկսում համոզվել, որ մենք վառ անհատականությունների պակաս երբևիցե չենք ունենալու և դեռ կկռենք մոր հաղթանակներ»:

Խաղ-մրցույթը, որը կրում է «Ճանաչենք անցյալը, գնահատենք ներկան և կերտենք ապագան» կարգախոսը, կազմակերպել է Մշակույթի և երիտասարդության պալատի տնօրինությունը: Այն նախաձեռնող՝ տնօրեն, պատմության մասնագետ Ջիմա Գասյանն առաջնորդվում է հայ մեծ վիպասան ԲաժՖու այս գաղափարաբանությամբ. «Ով չի ճանաչում իր հայրենիքը, ճանարտափորեն չի կարող սիրել այն»: «Այսօրվա պայմաններում շատ կարևոր է հայրենասիրական դաստիարակությունը, և ինչքան մենք լավ ճանաչենք մեր հայրենիքը, այնքան ամուր կանգնած կլինենք այդ հողի վրա, այնքան ամուր ամրագրած կլինենք մեր իրավունքը՝ մեր երկիրը



սեր քաղաքացի: Մրցույթի հարցերն ընտրվել են Վահրամ Բալասանի «Ար-

երկէջը՝ Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆԻ

ՄԵՐ ՄԵՐ ԱՐՑԱՆ

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԵՆՔ

Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում «Բրեյն ռինգ» խաղ է 10-12-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ: Չնչում է Արցախի Հանրապետության հիմնը: «Հայ ժողովուրդն իր վայրկյաններով անբախտ պատմության ընթացքում ստեղծել է մի համաստեղություն, որը սերունդների հետ խոսում է հայոց արքաների լեզվով, աշխարհահռչակ գիտնականների բանականությամբ, զորավարական տաղանդի չխամրող փայլով, հայ զինվորի անզուգական նվիրումի փառքով: Բոլոր նրանք, ովքեր արհամարհելով մահվան սարսուռը, դարձան հավերժի ճամփորդներ՝ երազելով

«Եկեք մի կողմ թողնենք հուզմունքը, փորձենք վայելել և հաճույք ստանալ խաղից, և թող առողջ տրամաբանությունը օգնական լինի ձեզ»,- այս խոսքով ուսուցչուհին հայտարարում է խաղի սկիզբը:

Յուրաքանչյուր հարցից հետո խաղացողները գլուխ զվարթ տված՝ մտածում են, տրամաբանում, քննարկում, տալիս պատասխան:

Թեպետև խաղը վարող ուսուցչուհու խոսքով՝ հավաքվել են ոչ այնքան մրցակցելու, որքան հաճելի ժամանակ անցկացնելու, կարող ենք ասել, որ և մեկը, և մյուսը կար: Արդյունքներն են վկայում: «Հաղթանակ» թիմը (11-րդ դասարան) անվերապահորեն առաջ էր: Իսկ մյուս երկու թիմերը, որոնք միմյանց չէին զիջում, հավասար միավորներով խաղը շարունակեցին այնքան ժամանակ, մինչև որ լրացուցիչ մի քանի հարցերից հետո որոշվեցին 2-րդ՝ «Ջարթմիր, լառ» (12-րդ դաս.) և 3-րդ՝ «Հայք» (10-րդ դաս.) տեղերը:

Միջոցառումը հասավ իր տրամաբանական ավարտին: Ոգևորություն, անշուշտ, կար: Յուրաքանչյուր հաղթանակ ուրախություն է պատճառում այն բերողին: Բայց կա հաղթանակ, որ բոլորի գերազույն նպատակն է, և որին միասնական ուժով են հասնում: Դա մենք տեսանք խաղի կուլմինացիոն կետում:

Վերջապանը կարծես սովորական ամփոփում էր խաղավար ուսուցչուհու կողմից. սկսեցին ազգի նվիրյալների առաջ խոնարհումով,

իսկ վերջապանը անուխի և հավատի ոգեկոչում էր. «Արցախ՝ վիրավոր ամհամար արհեստող վերբերով, մեր արարումով ու պարունով քեզ նոր շունչ կտանք, ցավը կկիսենք, հայերեն կխոսենք, կաղոթենք, եկեղեցիներումդ անսահման կարոտը՝ չհագեցող, չհասանելի, հո-



մեզ համար լավագույն ապագա և չխնայեցին սեփական կյանքը, սերունդների հիշողության մեջ կմնան որպես ազգի նվիրյալներ»:

Սա խաղի կազմակերպիչ և նրա վարող երիտասարդ ուսուցչուհի Չերմինե Լալայանի խորհրդանշական այս բացման խոսքից հետո ներկայացրել մեկ րոպե լուրջությամբ հարգեցին մեր հերոսների անմար հիշատակը:

Ուսուցչուհին ներկայացնում է «Հայք», «Հաղթանակ», «Ջարթմիր, լառ» թիմերին, բացատրում է խաղի կանոնները: Յուրաքանչյուր թիմ պետք է պատասխանի 12-ական հարցի՝ յուրաքանչյուրին 60 վայրկյան մտածելու ժամանակով: Հարցերը տարբեր թեմաներից են, դրանք ընտրում են թիմերը: Պատասխանում է այն մասնակիցը, որի վարկածը թիմի ավագն ընտրում է որպես վերջնական պատասխան: Միևնույն ժամանակ մրցակից թիմերը նույնպես գրում են իրենց հավանական պատասխանը և վարկած ունենալու դեպքում բարձրացնում են դրոշմ մինչև խաղացող թիմը կհնչեցնի իր տարբերակը: Եթե վերջինս սխալվի, ապա մրցակից թիմերը կարող են վաստակել միավորներ ճիշտ պատասխանելու դեպքում: Եթե հարցի պատասխանը թիմը տալիս է առանց ժամանակն օգտագործելու, ինչի համար պիտի բարձրացնի դրոշմ, ապա նա կվաստակի հավելյալ ժամանակ, որը կարող է օգտագործել, երբ կցանկանա: Հարցերը, որոնք վահանակի վրա կազմված թերթիկների տակ են, ըստ բարդության ունեն տարբեր միավորներ՝ 1-3 և



գու խորքում պահած, աննկատ կարբենք արցունքները ու կծպատանք՝ քեզնով սփոփվելով, քո վերբերը կամքնք, կշարունակենք պայքարը, նորից հաղթանակներ կտունենք, Արցախ, որովհետև հավատում ենք՝ վերահաղթանակ ենք... Միշտ կանգուն մնաս, մեր սեր Արցախ...»: Ուսուցչու այս խոսքերի ներքո, երբ նա հայրենասիրական երաժշտության ուղեկցությամբ թվարկում էր մեր կորսված պատմամշակութային և հոգևոր հուշարձանները՝ Ջերմաջուր, Հոնուտի կիրճ, Դաղիվանք, Տիգրանակերտ, Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի... խաղի մասնակիցները մեկ-մեկ մտածում էին վահանակի կացրած Արցախի քարտեզին և մեր սրբությունների լուսանկարները տեղադրում՝ ամբողջացնելով Արցախի քարտեզը՝ վերնագրված՝ «Վերադառնալու ենք»: Տեսարանն ավելի քան հուզիչ էր: Այդպես հրամանատարն է գործն առաջնորդում հաղթանակի:

Դպրոցի տնօրեն Լ. Հարությունյանը շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, ուսուցչին՝ մայիսյան հերոսամարտերին նվիրված՝ ինքնատիպ միջոցառում կազմակերպելու և առավել շատ՝ կորսված հայրենիքը վերադարձնելու նրանց հաստատուն կամքի, լավատեսության և հույս, հավատ ներշնչելու համար: «Մենք հպարտ ենք, որ մեր դպրոցում սովորում են այսպիսի աշակերտներ»,- ասաց նա՝ պատվոգրերով պարգևատրելով թիմերին:

Հ. Լալայանը իր կողմից տրամաբանությունը բարձրացնող ճապոնական խաչքառեր բաժանեց երեխաներին: Հուզված, միաժամանակ ուրախ էին բոլորը: 21՝ որ մեծերի առաջնորդությամբ նոր սերունդն հաջողվել է վերականգնել Արցախի Հանրապետության նախնական՝ մինչև 44-օրյա պատերազմը քարտեզը: Առայժմ՝ թղթի վրա, վաղը՝ իրականում: Հավատում ենք, խոսքը ուժ ունի:



տարբեր գույներ. բարդ հարցերն առանձնացված են կարմիր գույնով և ունեն «հուշում» օգնությունը, որից օգտվելու դեպքում հարցը գնահատվում է որպես 2 միավորանոց:

Ինչպես նշվեց, թեմաները տարբեր են և դասագրքից դուրս: Այդպես են ցանկացել խաղացողները: Հարցերը խմբավորված են «Երկրներ», «Տրամաբանեք», «Լոգոտիպ», «Ազգային խորհրդանիշներ», «Իմաստուն մտքեր», «Հայտնի մարդիկ» վերնագրերի տակ: Կա նաև երաժշտական ընդմիջում, որը նույնպես հարցեր է պարունակում: Յուրաքանչյուր երգ-երաժշտությունից հետո 30 վայրկյանի ընթացքում թիմերը պետք է թերթիկներում գրեն ֆիլմերի անունները: Խաղում ներառված է նաև «Բլից»՝ թիմի ավագների համար:

ՊԱՐՏՈՒԹՅԱՆԸ ՄԵՐ ԿԱՆԳԵՆ ԵՒ ԲԱԶՈՒԹՅՈՒՆ Է



Մայիսյան եռատոնի նախօրեին «Լուսարար»-ը հանպատրաստից գրույց անցկացրեց Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներին: Որքան էլ ցանկացանք չշոշափել 44-օրյա պատերազմի պատճառները, թե ինչու մեր բախտի անիվը 180 աստիճանով շրջվեց, այնուամենայնիվ, գրույցի մասնակիցներին հուզող հարցերը դրանց վերաբերյալ էին: Մենք չուզեցինք տուրք տալ եղածին: Բնական է, չենք հաշտվում կատարվածի հետ, բայց չենք էլ ուզում սևեռվել, մեր միտքը, որը ներուժը ծախսել այդ մտածումների վրա, որը ջլատում է մեր ուժերը: Միմյանց մեղադրելը մեզ լավ բանի չի հասցնի: Կատարվածի վերլուծությունը թող համապատասխան մարմինները տան, իսկ մենք դասեր քաղենք դրանից, քանզի այլևս սխալվելու իրավունք չունենք: Հիմա մեր գլխավոր նպատակն է՝ ինչպես ենք կառուցելու հետայսու մեր կյանքը, նոր սերունդը, որը վաղը-մյուս օրը կյանք է մտնելու, ինչպես է տեսնում իր ապագան: Մի խոսքով, աշակերտներին մղեցինք անկեղծ գրույցի, իրենց իսկ ընտրությամբ էլ այդ դասաժամն անվանեցինք՝ «Անկեղծ գրույց ապագայի շուրջ»:

Սերգեյ, 9-րդ դասարանից.

- Կյանքը շատ է դժվար պարտությունից հետո: Հիմա Շուշիում չենք, բայց Շուշիի հետ ենք, իմ մտապատկերում այն միշտ լինելու է բերդաքաղաք: Մեծ դժվարությամբ ենք այն ազատագրել, նորից կազատագրենք: Այս իրավիճակից դուրս գալու երկու ուղի կա՝ դիվանագիտություն և տնտեսության հզորացում: Մեր կորցրած տարածքները վերադարձնելու գործում իմ ներդրումը ես տեսնում եմ իմ մասնագիտական ծառայությունները լավ կատարելու մեջ: Պլանավորել են դառնալ տնտեսագետ, նաև՝ ծրագրավորող: Կարող եմ այդ երկուսը համատեղել: Համաշխարհային օրինակը ցույց է տալիս, որ անգամ անապատը կարելի է ծաղկուն հողատարածք դարձնել, ինչպես Իրեաներն են արել Իսրայելում՝ 2000 տարի ցիրուցան լինելուց հետո ստեղծելով հզոր պետություն, ինչպես Ճապոնիան կարճ ժամանակում արեց 2-րդ համաշխարհային պատերազմից հետո, ինչպես Սինգապուրն է զարգացել: Մեր կառավարությունը պետք է խրախուսի ինչպիսի մարդկանց՝ ճիշտ տեղում ճիշտ մարդկանց նշանակելով: Ասում են, չէ՞, եթե ուզում եք տվյալ երկիրը թուլացնել, այնպես արեք, որ ամեն տեղ վատ մասնագետ աշխատի:

Դավիթ, 11-րդ դասարանից.

- Մեր պաշտպանության, անվտանգության գլխավոր երաշխավորը մեր բանակն է: Հիմա տիեզերքից է ամեն ինչ կառավարվում: Մենք պիտի կարողանանք նրա հնարավորություններն օգտագործել: Արդրեջանը փող ունի, կարողանում է զենք առնել: Բայց մենք մի առավելություն ունենք՝ մեր մտավոր ներուժը և կարող ենք ինքներս ստեղծել պահանջվող զենքը: Այժմյան պատերազմները զինվորների քանակով չեն որոշվում: Եվ պարտադիր չէ, որ մեր զինվորը կուրծքը դեմ տված գնա թշնամուն ընդառաջ ու հերոսաբար զոհվի: Թող առաջավոր տեխնոլոգիաներն աշխատեն նրա փոխարեն: Դիվանագիտությունը շատ կարևոր է, բայց գիտությունն էլ պիտի զարգանա, և գիտությամբ հաղթենք:

Պավել, 11-րդ դասարանից.

- Իմ ապագան ես զինվորական ծառայության մեջ եմ տեսնում: Պետությունը պետք է առավելագույնս միջոցներ տրամադրի հզորանալու վրա և վերջնական հարվածով իր հարցը լուծի:

Ջոյա, 9-րդ դասարանից.

- Մեր հարցը լուծելու համար մենք մախ պետք է ապրենք Արցախում և այն շենացնենք: Ես հավատում եմ, որ ժամանակի ընթացքում Շուշին նորից մերն է լինելու, և մենք ապրելու ենք Շուշիում: Մեր՝ աշակերտներիս գերխնդիրը գիտելիքներով զինվելն է, մեր պատմությունը լավ իմանալը, նրա վաղեմի հաղթանակները հիշելով՝ ծնկած տեղից բարձրանալ և առաջ գնալ: Պետք է հիշել անցյալը՝ նրա և լավ, և վատ դասերը յուրացնելու համար, և մեր սխալներն ուղղելը: Մեզանից հարուստ պատմություն ունեցող չկա, բայց պետք չենք առնում: Հարևաններից էլ պետք է սովորել: Մեր հողը քայքայ է, և ինչպես բանաստեղծն է ասում՝ ավելի է քաղցրանում վտանգի պահին: Այս հողի համար նաև իմ հայրն է իր կյանքը տվել, ինչպես՝ կարող եմ ես լքել այն: Ընդհակառակը, մտածում եմ՝ ինչպես ապաքինել նրա վերքը: Այս պահին մեր մոտակա խնդիրը քննություններին լավ պատրաստվելն է, որպեսզի հաջողությամբ հանձնենք և նախապատրաստվենք զալից հաղթանակներին:

Օլյա Իշխանյան, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի.

- 90-ական թվականների պատերազմի ժամանակ լույս, գազ չենք ունեցել, շաքարավազ և անհրաժեշտ մթերքներ: Բայց հավատացել ենք, որ կհաղթենք: Հիմա կտրվել ենք, քանի որ պարտվել ենք, բայց պետք է մեր մեջ բարձրանալու ուժ գտնենք: Դրա համար ամեն մեկս մեր տեղում, ինչպես դիրքում պետք է լինի: Մենք տեր ենք և՛ մեր հաղթանակներին, և՛ մեր պարտությանը: Եռատոնը մեր հավատի հիմքն է: Այն հույսով ենք ապրում, որ մի օր նորից վերադառնալու ենք Շուշի, Ղազանչեցոց եկեղեցուն բոլորս աղոթք ենք անելու: Հույս ունենք, որ մեր այսօրվա 9-րդ դասարանիցներն իրենց վերջին գանգը Շուշիում են նշելու: Այսինքն՝ առնվազն 3 տարի հետո մենք նորից Շուշիում ենք լինելու:

Հարգելի «Լուսարար», Ձեզ էլ հրավիրելու ենք մեր տոնին:

- Ուրեմն՝ կհանդիպենք Շուշիում:

ԽԱՂ-ՄՐՑՈՒՅՑ

ԹԻՄԵՐԸ ՊԱՏՎՈՎ ԿԱՏԱՐԵՅԻՆ ԱՌԱՋԱՊՐԱՆԸ

«Ձորաց ակումբ» ՀԿ-ի և ԱՀ ԿԳՄՍՆ-ի համատեղ ուժերով մայիսի 8-ին Արցախում առաջին անգամ անցկացվեց «Քուեսթ» խաղ-մրցույթ՝ նվիրված ԱՀ ՊԲ կազմավորման 30-ամյակին: Խաղի մեկնարկը տրվեց «Մենք ենք մեր սարերը» հուշարձանի մոտակայքից:

Ներկա էին «Ձորաց ակումբ»-ի նախաձեռնող, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Արթուր Աղաբեկյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, կրթական ոլորտի աշխատողներ, ՀՀ-ից ներկայացուցիչներ:

Խաղին մասնակցեցին Ստեփանակերտի և շրջանների 20 դպրոցների թիմեր:

Միջոցառումը բացեց «Ձորաց ակումբ»-ի նախագահ, ԱՀ ԿԳՄՍ ՆՁՊ բաժնի վարիչ Դավիթ Օհանջանյանը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին հայրենիքի համար մարտիրոսվածների հիշատակը:

Խաղի կարևորությունը նշելով՝ Դ. Օհանջանյանն ասաց, որ կրթության և անձի զարգացման խնդիրների լուծումն իրականացվում է նաև արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների միջոցով, և այդ տեսանկյունից «Քուեսթ» խաղը մի յուրօրինակ միջոց է: Նպատակը պարզ է ու հստակ.

ների առջև, և մենք բոլորս պիտի համախմբվենք, կարողանանք վերականգնել մեր հայրց երկիր Արցախը: Մեր պաշտպանության, պետականության ամրապնդման, բանակի, ինքնության պահպանման համար անչափ կարևոր է դաստիարակել սերունդ, որն ունակ է կերտելու փայլուն ապագա ու լուսավոր ճանապարհ»:

Խաղի կանոններին ծանոթացման ու անցկացման ձևաչափի մասին խոսքը տրվում է ՀՀ-ից հրավիրված մասնագետ Միքայել Հովհաննիսյանին:

Ժամանակ: Հաղթում է այն թիմը, որը կկատարի տրված ժամանակահատվածում ամենաշատ քանակով առաջադրանքներ: Եթե հավասար քանակությամբ առաջադրանքներ են կատարվել, հաղթող է ճանաչվում այն թիմը, որը կատարել է ավելի արագ:

Ամեն առաջադրանք կատարելուց հետո թիմը հեռախոսով ֆոտոհաշվետվություն է տալիս «շտաբ»-ին՝ մրցութային հանձնախմբին՝ տվյալ կետում լուսանկարվելով:

Խաղի վերջում՝ դեռ մինչև արդյունքների ամփոփումը զրուցեցինք մի քանի մասնակիցների հետ: Արսեն ԵՂԻՅԱՆ, Ասկերանի թիմի ավագ.

- Հարցերը շատ հետաքրքիր էին, օրինակ. «Այս բառի սկզբնական իմաստը ծիպական է եղել: Այնուամենայնիվ, այն մարդիկ, որոնց մենք այդպես ենք անվանում, վաղուց համարվում են զխափող օղում, ջրում և ցամաքում»: Խոսքը մարշալի մասին է, Ստեփանակերտի թանգարանում մենք պետք է գտնեինք մարշալների արձանները և լուսանկարվեինք դրանց մոտ: Ճիշտն ասած, առաջին անգամ էի լինում այդ թանգարանում, որը շատ հետաքրքիր էր:

Մաքսիմ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ, թիմի անդամ.

- Ասկերանի մասին ամեն ինչ գիտինք և հեշտ գտանք պահանջվող վայրերը: Տեղանքում արագ կողմնորոշվելու համար գիտելիք ունենալն օգնում է:

Արդյունքների ամփոփումից հետո պարզ դարձավ, որ ամենակարճ ժամանակում առաջադրանքները ճիշտ կատարել է Ստեփանակերտի 11-րդ ավագ դպրոցի թիմը (գինդել՝ Յանիկ Հայրուսյանը հպարտորեն նշեց, որ դպրոցի 600 աշակերտներից հենց իրենց են ընդգրկել թիմի կազմում՝ հաշվի առնելով իրենց և՛ մտավոր, և՛ ֆիզիկական, թիմով աշխատելու կարողությունները: Եվ ուրախ է, որ արդարացի էր դպրոցի հույսերը:

Խաղի կազմակերպիչները զարմացել էին, որ մեծ արագությամբ՝ մեկ ժամ 30 րոպեում կատարել են առաջադրանքը: Թիմի անդամներին դուր է եկել, որ որոշ հարցերի պատասխաններ գտնելով՝ նոր գիտելիքներ են ստացել:

Չնայած եղանակային անբարենպաստ պայմաններին, թիմերը պատվով կատարեցին առաջադրանքը: Ժամանակից զգալիորեն արագ փորձությունները հաղթահարեցին նաև Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ և հ.12 հիմնական դպրոցների թիմերը՝ համապատասխանաբար գրավելով 2-րդ և 3-րդ տեղերը: Հաղթող եռյակն արժամատուցվեց արժեքավոր մրցանակի՝ ՆՁՊ կաբինետների համար մեծ էկրանով պրոյեկտոր, ինչպես նաև՝ «Գրեյթ Փարթներս» ընկերության կողմից նվերներ: Բոլոր մասնակիցները «Ձորաց ակումբ»-ի կողմից ստացան հանրամատչելի գրականության և գրեական պիտույքների փաթեթ, իսկ գինդելները՝ 40-հազարական դրամ պարգև:

Մասնակիցները վկայեցին, որ խաղը հետաքրքիր էր, հարստացան գիտելիքներով, և ցանկալի է՝ հաճախակի կազմակերպվեն:

Մասնակիցները վկայեցին, որ խաղը հետաքրքիր էր, հարստացան գիտելիքներով, և ցանկալի է՝ հաճախակի կազմակերպվեն:

Ս. ՎԱՐԻԵԼՅԱՆ

ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆԿԻՐՎԱԾ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ



Մայիսի 9-ը մեզ համար շարունակում է մնալ առանձնահատուկ՝ հաղթանակ խորհրդանշող օր: Այդ առթիվ ԱՀ ԿԳՄՍՆ-ի նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Նախարարության ԱԾ և ՆՁՊ վարչության արտադպրոցական ծրագրերի բաժինը օրեր առաջ կազմակերպել էր «Ապրենք խաղաղ», «Արցախ իմ, հող իմ» խորագրերով նկարչական մրցույթ, որին մասնակցել են հանրապետության հանրակրթական, արվեստի դպրոցների և ՄՊՍԿ-ների 9-16 տարեկան երեխաները: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են տոնական օրը: 9-12 տարեկանների խմբում առաջին տեղը զբաղեցրել է



Վիկա Դավթյանը (Հաղորդի Ս. Մանվելյանի անվ. միջն. դպրոց), երկրորդ տեղը՝ Միլա Դադայանը (Ստեփանակերտի հ. 1 հիմն. դպրոց), երրորդ մրցանակային տեղում Ռոբերտ Դատումյանն է (Հաղորդի ՄՊՍԿ):

13-16 տարեկային խմբում հաղթող է ճանաչվել Աննա Հայրիյանը (Մարտունու ՄՊՍԿ), երկրորդ և երրորդ մրցանակային տեղերում Լարիսա Արզումանյանն է (Ստեփ. հ. 8 մ/հ դպրոց) և Մանանա Խաչատրյանը (Մարտակերտի շրջ. Դրժբոմի միջն. դպրոց):



Մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները և ինքնատիպ նկարների հեղինակները ԱՀ ԿԳՄՍՆ-ի կողմից պարգևատրվեցին դիպլոմներով, պատվոգրերով և նվերներով: Մայիսի 9-ի միջոցառումների շրջանակում ԱՀ ԿԳՄՍՆ-ի համագործակցությամբ Ստեփանակերտի «Պոլ Էլյուարի տուն. Ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ում մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների 130 աշակերտների մասնակցությամբ իրականացվել է «Նաղաշ» մշակութաժամանցային ծրագիրը:

«Մենք տեր ենք մեր հաղթանակներին, «Իմ անուշ հայրենիք» և «Ծաղիկներս՝ նահատակաց» թեմաների շուրջ իրենց պատկերացումները թղթին հանձնելով՝ պատանիները ստեղծել են խթային նկարներ, պատրաստել մայիսի 9-ի թեմատիկ բացիկներ:

«Մենք ենք մեր սարերը» հուշարձանի հարակից տարածքում համերգային ծրագրով հանդես են եկել «Մենք ենք մեր սարերը», «Ղարաբաղ» պետական համույթները, «Արցախի ձայներ» երաժշտական նախագծի սաները:

ԱՀ ԿԳՄՍՆ



միավորելով մտավոր մրցակցության և արագության տարրեր՝ էլ ավելի ընդլայնել դպրոցականների հետաքրքրությունների շրջանակը: Խնդիր է դրված խաղի միջոցով մասնակիցներին մեծածավալ տեղեկատվություն հաղորդել մեր երկրի, ժողովրդի, ինչպես նաև Արցախի պատմության հերոսական էջերի մասին: Խաղի նպատակներն ու խնդիրները հեռագնա են՝ հետապնդում է ազգային-պետական մտածողության ձևավորման և ռազմաօդային-սփրական որակների ամրապնդման միտում, առաջնահերթ են նաև ֆիզիկական, մտավոր կարողությունների պահպանումը, թիմային մտածողության ձևավորումը, թիմային գործելակերպի հմտությունների զարգացումը:

Մասնակիցներին ողջունեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը.

«Այսօր բոլորիդ թախծոտ հայացքներում մի նոր հույս է նշմարվում. դա մեր սահմանների վերականգնումն է: Դժվարությունների և անընդհատ կրկնվող պայթյունների հորձանուտում մենք պիտի ապահովենք գիտակցական բարձր մակարդակ, բոլոր ճակատներում պայքարենք հայի մեր տեսակը պահպանելու և բոլոր քառուղիներում գոյատևելու համար: Այսօր Արցախի Հանրապետությունը կանգնած է բարդ աշխարհաքաղաքական իրողությունների և մենք բոլորս պիտի համախմբվենք, կարողանանք վերականգնել մեր հայրց երկիր Արցախը: Մեր պաշտպանության, պետականության ամրապնդման, բանակի, ինքնության պահպանման համար անչափ կարևոր է դաստիարակել սերունդ, որն ունակ է կերտելու փայլուն ապագա ու լուսավոր ճանապարհ»:

«Քուեսթ»-ը ճանապարհի է, որը պետք է անցնի յուրաքանչյուր թիմ: Թիմերը ստանում են ծրարներ, որոնց մեջ այն ճանապարհը նկարագրող 12 առաջադրանքներ են, որ նրանք պետք է անցնեն տրված 3 ժամում: Այդ ընթացքում թիմերը պետք է ցույց տան լավագույն արդյունք՝ անցնելով 12 կետ: Իսկ թե ինչպես են այդ կետերը գտնելու, նկարագրված են առաջադրանքներում: Դա կարող է լինել ինչ-որ գլուխկոտրուկի տեսքով, կարող է լինել պարզապես տվյալ

«Քուեսթ»-ը ճանապարհի է, որը պետք է անցնի յուրաքանչյուր թիմ: Թիմերը ստանում են ծրարներ, որոնց մեջ այն ճանապարհը նկարագրող 12 առաջադրանքներ են, որ նրանք պետք է անցնեն տրված 3 ժամում: Այդ ընթացքում թիմերը պետք է ցույց տան լավագույն արդյունք՝ անցնելով 12 կետ: Իսկ թե ինչպես են այդ կետերը գտնելու, նկարագրված են առաջադրանքներում: Դա կարող է լինել ինչ-որ գլուխկոտրուկի տեսքով, կարող է լինել պարզապես տվյալ



կետի նկարագրություն (խաղի վերջում ծանոթացանք մի քանի առաջադրանքների, օրինակ. «Քաղաքի այս վայրի անունը տվել է փոքրիկ պղնձե մետաղադրանք: Ու թեև անվանումը հայկական չէ, սակայն արմատացել է և կիրառվում է մինչև օրս»՝ Պյատաշոկ):

Թիմերը երկու ուղղությամբ պետք է շարժվեին՝ Ստեփանակերտ-Ասկերան և հակառակ ուղղությամբ՝ կիսվելով երկու մասի:

Խնդիրները շատ բարդ չեն, ունեն նաև առանձնահատկություն: Թիմը կարող է ստանալ բոնուսային ժամանակ, եթե կտոնի ծածկագրերը:

Թիմն ունի հեռախոսով երկու հուշում ստանալու հնարավորություն, բայց այդ դեպքում նրա վերջնական ժամանակին գումարվելու է որոշակի

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԱՆՍԱՀՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ

Արցախյան վերջին պատերազմում ծանր կորուստ կրեց նաև Արցախի պետական համալսարանը, որի շատ ուսանողներ ու շրջանավարտներ, դասախոսներ մասնակցեցին այս պատերազմին: 26 ուսանող տուն չեկան, համալրեցին անմահ հերոսների շարքերը: 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված՝ Արցախի պետական համալսարանում մայիսի 12-13-ը կայացավ ուսանողական գիտաժողով, որի բացմանը ներկա էին ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Անահիտ Դակոբյանը, ՀՀ և Արցախի տարբեր բուհերի շուրջ 130 ներկայացուցիչներ:

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունեց ներկաներին, կարևորեց նման ներկայացուցչությանը գիտաժողովի անցկացումը: Ռեկտորի առաջարկով ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակների հիշատակը: Ներկայացնելով երկօրյա գիտաժողովի բովանդակությունը՝ նա ասաց. «Բուհում ավանդույթի ուժ է ստացել ամեն տարի ուսանողական գիտաժողովների կազմակերպումը: Գիտխորհրդի որոշմամբ այս երկու տարիների մեր բոլոր միջոցառումները նվիրված են մեր լույս տղաների հիշատակին: 44-օրյա պատերազմում բուհի 26 ուսանողներ նահատակվեցին, որպեսզի մենք ապրենք, որպեսզի ուսումնական գործընթացը շարունակվի»: Ներկայացրեց նաև տարբեր բուհերից հրավիրված հյուրերին, որոնց շարքում էր նաև Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը: Սարգ, որ սկսած 1988 թվականից, մասնակցել է Արցախյան շարժմանն ու պատերազմական գործողություններին, այնուհետև գլխավորում է մի կարևոր ու բարեգործական հիմնադրամ, որի գործունեության միջավայրը հիմնականում Արցախն է: Նշեմ, որ նախօրեին Գ. Մելիքյանն արժանացել է ԱրԴՀ «Պատվավոր դոկտոր»-ի կոչման: Նույն պատվին է արժանացել նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան՝ պատվիրակության ղեկավար Գագիկ Ղազինյանը:

Ողջունյի իր խոսքում ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը նշեց, որ գիտաժողովը՝ նվիրված մեր նահատակ տղաներին, լրացուցիչ պարտավորություն է ուսանողների համար՝ ավելի լավ սովորել, գիտական գործունեություն ծավալել: «Մենք բոլոր նահատակ հերոսների հիշատակի առջև պարտավոր ենք ապրել այնպես, ինչպես իրենք էին երազում: Ապրենք՝ դասեր քաղելով նախապատերազմյան և պատերազմի ընթացքի ու ներկա իրավիճակներից: Այդ առումով պետք է մեր ուսանողները, դասախոսները գործեն որպես քաղաքացի և որպես մասնագետ ու գիտնական», - խոսքը շարունակեց Ա. Բեգլարյանը: Անդրադառնալով ներկա իրավիճակին՝

ասաց, որ բավականին դժվար վիճակում ենք այսօր ապրում, սակայն ոչ՝ փակուղային: Այս առումով կարևորեց ունենալ պատշաճ որակներ, արժեհամակարգ ու սկզբունքներ, և համոզված է, որ կարողացնենք նահատակ հերոսների երազներն ու սպասումները:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Դակոբյանը, անդրադառնալով կրթության խնդիրներին, ասաց, որ կրթության բնագավառում առաջացած զարգացումները տարբեր խնդիրներ են առաջադրում մեր

կրթեցնող է: Գ. Ղազինյանը կարևորեց մեր հայրենիքի երկու հատվածների միասնությունը՝ ընդգծելով, որ հերոսներն ընկան մեր միասնական հայրենիքի համար: Գործի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Թեմինե Մարությանը նույնպես կարևորեց գիտաժողովը՝ իր խոսքում բերելով նահատակ տղաների հիշատակի առջև: ԱրԴՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիչյանը հանդես եկավ զեկուցումով՝ համառոտ ներկայացնելով բուհի գործունեությունը: Կարևորեց այն, որ ԱրԴՀ-ն ամբողջ ներուժով փորձում է իր շուրջը համախմբել կրթության, գիտության, մշակույթի այնպիսի գործիչներին, որոնք իրենց ներկայությամբ ու գործունեությամբ կնպաստեն Արցախի վաղվա օրվա բարեկեցությանը: Ձեկուցումներով հանդես եկան նաև ուսանողները: Հայ-ամերիկյան համալսարանի ուսանող Դավիթ Սերոբյանն անդրադարձավ Հայոց ցեղասպանության ժխտողականության քաղաքականությանը, որն ակտիվ կերպով վարում է Թուրքիան: Հայ-ռուսական համալսարանի ուսանող Վիլեն Մնացականյանը ներկայացրեց Հայաստանի և Իրանի ներառարային փոխհարաբերությունները: Արցախի պետական համալսարանի ուսանողուհի Սոնա Մուսայելյանի զեկուցումը թուրք գրող Էլիֆ Շաֆաքի «Ստամբուլի բիծը» վեպում հիշողության ու մոռացումի պայքարի մասին էր:

Այնուհետև գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց պատմություն և իրավագիտություն, տնտեսագիտություն, բանասիրություն, բնական գիտություններ, ինֆորմատիկա, ՏՏ և մաթեմատիկա մասնախմբերում: Ելույթ ունեցողներն ուսանողներին կոչ արեցին արժանի շարունակողը լինել հանուն հայրենիքի զարկված իրենց ուսանող-ընկերների գործի, քանզի նրանցից յուրաքանչյուրը նահատակվել է, որ Արցախը լինի, մեր հայրենիքում զարունները բացվեն խաղաղ ու ստեղծարար:

Երեկոյան Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվեց Արցախի պետական համալսարանի՝ 44-օրյա պատերազմում զոհված ուսանողների հիշատակին նվիրված հուշ-երեկո: Բացման խոսքով հանդես եկավ բուհի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը: Գիտաժողովի ծրագրում նախատեսված էին նաև այցելել Արցախի տարբեր վայրեր: Մեզ հետ զրույցում Գուրգեն Մելիքյանն ասաց, որ շատ կարևոր միջոցառում է այս գիտաժողովը: Միայն ՀՀ-ից 5-6 բուհի ներկայացուցիչներ են մասնակցում: Նշեց նաև, որ իրենց հիմնադրամի կողմից ԵՊՀ 100-ամյակին նվիրված պուրակում կիրականացվի ծառատունկ՝ անկախ Բերձորի ներկա վիճակից:

հասարակությանը, հատկապես պայմանավորված Արցախի այս ծանր իրավաքաղաքական իրավիճակով: «2020թ. մեր երկիրը կանգնեց ողբերգական և դառն իրականության առջև, մենք կորցրինք մեր հանրապետության տարածքների զգալի հատվածը: Այժմ մեզ համար կարևոր է գիտակցական կարգապահության բարձրացումը, մեր մտածելակերպի վերածնվածությունը և մեր ազգային

հայրենիքում զարունները բացվեն խաղաղ ու ստեղծարար:

Երեկոյան Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվեց Արցախի պետական համալսարանի՝ 44-օրյա պատերազմում զոհված ուսանողների հիշատակին նվիրված հուշ-երեկո: Բացման խոսքով հանդես եկավ բուհի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը: Գիտաժողովի ծրագրում նախատեսված էին նաև այցելել Արցախի տարբեր վայրեր: Մեզ հետ զրույցում Գուրգեն Մելիքյանն ասաց, որ շատ կարևոր միջոցառում է այս գիտաժողովը: Միայն ՀՀ-ից 5-6 բուհի ներկայացուցիչներ են մասնակցում: Նշեց նաև, որ իրենց հիմնադրամի կողմից ԵՊՀ 100-ամյակին նվիրված պուրակում կիրականացվի ծառատունկ՝ անկախ Բերձորի ներկա վիճակից:

հայրենիքում զարունները բացվեն խաղաղ ու ստեղծարար:

Երեկոյան Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպվեց Արցախի պետական համալսարանի՝ 44-օրյա պատերազմում զոհված ուսանողների հիշատակին նվիրված հուշ-երեկո: Բացման խոսքով հանդես եկավ բուհի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը: Գիտաժողովի ծրագրում նախատեսված էին նաև այցելել Արցախի տարբեր վայրեր: Մեզ հետ զրույցում Գուրգեն Մելիքյանն ասաց, որ շատ կարևոր միջոցառում է այս գիտաժողովը: Միայն ՀՀ-ից 5-6 բուհի ներկայացուցիչներ են մասնակցում: Նշեց նաև, որ իրենց հիմնադրամի կողմից ԵՊՀ 100-ամյակին նվիրված պուրակում կիրականացվի ծառատունկ՝ անկախ Բերձորի ներկա վիճակից:

հայրենիքում զարունները բացվեն խաղաղ ու ստեղծարար:

ՀԱՎԵՐԺ 22 ՏԱՐԵԿԱՆ



Արցախյան երրորդ պատերազմից հետո Քուլատակի միջնակարգ դպրոցի մուտքին մի հուշապատ է բացվել, որը նվիրված է դպրոցի սան, մերօրյա հերոս Շուրա Սուրենի Մարկոսյանի հիշատակին:

Դպրոցի յուրաքանչյուր օր ուսուցիչների և աշակերտների համար լցված է նրա մասին հուշերով: Այդ է վկայում այն, որ ներս մտնողը նախ բարևում է Շուրա Մարկոսյանին՝ միշտ ներկա պահելով նրան:

Ապրիլի 9-ին Քուլատակի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Շուրա Մարկոսյանի ծննդյան 24-ամյակին: Միջոցառումը բացվեց Արցախի Հանրապետության օրհներգով, ներս բերվեց Արցախի դրոշը, ապա մեկ րոպե լռությամբ հարգվեց Արցախի համար մեր բոլոր նահատակված տղաների հիշատակը:

Հայրենասիրական երգ ու բանաստեղծություններով հանդես եկան դպրոցի աշակերտները: «Նա կդառնար 24 տարեկան» խորագրով միջոցառումը լցված էր այն օրերի հուշերով, երբ նույն դահլիճից Շուրան էր գովերգում Արցախյան առաջին պատերազմի ժամանակ զոհված մեր տղաներին: Զգիտեմ, պատահականությո՞ւն էր, թե՞ զուտ ճակատագիրն էր թելադրում, որ Շուրան բեմակատարությունների ժամանակ միշտ ստանձներ հերոսի կերպարը:



Միջոցառմանը ելույթով հանդես եկավ Շուրա Մարկոսյանի քույրը՝ Լենա Մարկոսյանը: Հոգու մեջ պահելով անտանելի ցավը՝ նա կարողացավ խորապես ներկայացնել եղբորը, նրա գրված, բայց չերգված բոլոր երգերը մոր և կնոջ՝ Լիլիթի մասին: Լենա Մարկոսյանը քողարկված ներկայացրեց այն աշխարհը, որով ներկայում ապրում է իրենց ընտանիքը՝ կոչելով այն «Շուրա»:

Տարիներ կանցնեն, բայց Շուրան միշտ կմնա 22 տարեկան:

Միջոցառմանը լսվեց նրա կենդանի ձայնը, ցուցադրվեց նրա վերջին զանգը, որտեղ նա ասում է իր սրտի խոսքը՝ նվիրված համադասարանցիներին և դպրոցի ուսուցիչներին:

Քուլատակի միջնակարգ դպրոցում ոչ ոք քեզ բացակա չի դնի, Շուրա... Քո սխրանքն անմահ է, քո անունը՝ մեր սրտերում:

Հուշ-ցերեկույթին ներկա էին դպրոցի աշակերտները, ուսուցիչները, Շուրա Մարկոսյանի ընտանիքը, հարազատները, ավագ և կրտսեր ընկերները:

Սուսաննա ԱՂԱՍՅԱՆ
Քուլատակի միջնակարգ դպրոցի
աշխարհագրության ուսուցչուհի

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԴԻՄՈՐԴ - 2022

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՎԱՅՏԱԳՐՈՒՄ. ԻՆՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԿԱՆ



Ավարտվել է բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների հայտագրումը: Որ բուհում՝ ինչքան դիմորդ և ինչ մասնագիտություններով՝ պարզեցինք ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի ԲԱՐԱՍՅԱՆԻ հետ:

- Պարոն Քարանյան, ինչպե՞ս է անցել դիմորդների հայտագրումը, թվական ի՞նչ տվյալներ կտանձնագրերի:

Ս. ք. ապրիլի 15-ից մինչև մայիսի 8-ը անց է կացվել բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների հայտագրումը: Ունենք 968 շրջանավարտ, բուհերի համար հայտագրվել է 710 դիմորդ: Նրանց մեջ մտնում են նաև քոլեջների և նախորդ տարիների շրջանավարտներ, զորացրված զինծառայողներ, պարտադիր զինվորական ծառայություն անցնողներ, որոնք ցանկություն ունեն ընդունվել ռազմական համալսարաններ:

Քննությունների հայտագրումը հետևյալ ձևով էր. ԱՀ ԳԹԿ մրցույթով անցնելու համար դիմորդները հայտագրվել են Արցախի բուհերի և ՀՀ-ում՝ մեր նպատակային տեղերի համար: Եթե դիմորդը ցանկություն ունի ընդունվել ՀՀ բուհեր Արցախի ոչ նպատակային տեղերով կամ այն նպատակային տեղեր, որտեղ կան ներքուհական քննություններ, ընտրած մասնագիտության ընդունելության քննությունները համար դարձյալ հայտագրվել է ԱՀ ԳԹԿ-ի կողմից կազմավորված քննական կենտրոններում: Ներքուհական քննությունները հանձնելու են տվյալ բուհում: Բայց մենք ունենք նաև ՀՀ-ից դիմորդներ, որոնք հայտագրվել են Արցախի բուհերի համար: Դրանք հիմնականում Արցախից տեղահանված քաղաքացիներն են, որոնք ժամանակավորապես բնակվում են ՀՀ-ում, բայց ցանկություն ունեն ընդունվել ԱՀ բուհեր: Նրանք միասնական քննությունները կհանձնեն ՀՀ-ում՝ իրենց ուսումնական հաստատություններին կցված քննական կենտրոններում:

Մասնագիտություններ են եղել ծրագրի հարցում: Այս տարի մեզ բավականին օգնություն են ցուցաբերել Ստեփանակերտի հ.3, 8, 11 և ֆիզմաթ դպրոցների օպերատորները, որոնք իրենց ուսումնական հաստատություններում օգնել են դիմորդներին հայտագրվելու dimord.am կայքում: Բայց ինչպես միշտ, նրանց 90 %-ը չգիտեմ ինչ պատճառներով ներկայացել է ԱՀ ԳԹԿ, որպեսզի տեղում լրացնի դիմում-հայտը:

Այժմ՝ ցուցանիշների մասին: Հայտագրված 697 դիմորդներից ունենք և՛ Արցախի, և՛ ՀՀ բուհերի համար: Այս տարի, ցավոք, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դիմորդների քանակը, որոնք հայտագրվել են ՀՀ բուհերի՝ Արցախի հատկացված տեղերի համար, ու նաև նրանք, որ ուղիղ դիմել են ՀՀ բուհեր, այսինքն՝ ոչ մեր նպատակային տեղերով, կազմել է դիմորդների 36 %-ը: Դա մտածելու տեղիք է տալիս: Ես դա մեծ քանակ են համարում: Նախորդ տարիներին դա 10-15 %- էր:

Արցախի պետական համալսարանի համար հայտագրվել է 358 դիմորդ, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի՝ 40, որից 24-ը «Դի-զայն» և «Հագուստի մոդելավորում» մասնագիտություններով, որոնք «Գյուրջյան» կիրառական ինստիտուտի, որը միացել է ՀՏՀ-ին, մասնագիտություններն են: Ստացվում է, որ Շուշիի տեխնոլոգիական հայտագրվել է 16 դիմորդ: Սա այնքան էլ լավ ցուցանիշ չէ: «Գրի-գոր Նարեկացի» և «Մեսրոպ Մաշտոց» համալսարանների համար հայտագրվել է համապատասխանաբար 26 և 37 դիմորդ:

Բոլոր միասնական քննությունները դիմորդ-

ները հանձնելու են ԱՀ-ում՝ ԳԹԿ-ի կողմից կազմավորված քննական կենտրոններում: Ներքուհական քննությունները հանձնելու են տվյալ բուհում: Բայց մենք ունենք նաև ՀՀ-ից դիմորդներ, որոնք հայտագրվել են Արցախի բուհերի համար: Դրանք հիմնականում Արցախից տեղահանված քաղաքացիներն են, որոնք ժամանակավորապես բնակվում են ՀՀ-ում, բայց ցանկություն ունեն ընդունվել ԱՀ բուհեր: Նրանք միասնական քննությունները կհանձնեն ՀՀ-ում՝ իրենց ուսումնական հաստատություններին կցված քննական կենտրոններում:

- Ըստ մասնագիտությունների ինչպիսի՞ն է վիճակը:

- ՀՀ բուհերի համար ամենամեծ քանակով դիմորդներ ընտրել են «Բուժական գործ» մասնագիտությունը: Երևանի Յերաբու անվան պետական բժշկական և կիրառական մաթեմատիկա համար նախատեսված 5 անվճար և 7 վճարովի տեղերի համար մրցակցելու է 50 դիմորդ, ԵՊՀ «Թյուրքագիտություն» մասնագիտության համար 1-ական անվճար և վճարովի տեղերի համար՝ 4 դիմորդ, նույնքան էլ՝ «Միջազգային հարաբերություններ»-ում, «Անգլերեն»՝ 1 տեղի համար՝ 3 հոգի: Աննախադեպ է վիճակը «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունում. մեկական անվճար և վճարովի տեղերի համար՝ 9 դիմորդ: «Հոգեբանություն»՝ 1 տեղի համար՝ 3 հոգի: Վատ ցուցանիշ չէ: «Տեղեկատվական անվտանգություն»՝ 1-ական անվճար և վճարովի տեղերի համար՝ 5 հոգի:

- Իսկ ՀՀ բուհերում կա՞ն նպատակային տեղեր, որոնց չեն հայտագրվել:

- Ցավոք, այո: Դիմորդներ չունենք մեր երկրի համար շատ կարևոր մասնագիտություններով՝ «Էլեկտրատեխնիկա», «Ավտոմատացում», «Մեքենաշինություն և նյութերի մշակում», «Սարքաշինություն և չափագիտություն», «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա», «Սննդի անվտանգություն», «Երկրաբանություն» և այլն:

ՀՀ ազգային ագրարային համալսարանի մեզ հատկացված բոլոր 6 մասնագիտություններում դիմորդ չունենք: Ես ցավով են արձանագրում այս փաստը:

Էլեկտրաէներգիան, գյուղըրտը մեր երկրի համար գերակա ուղղություններ են: Գյուղատնտեսությունը, «Արցախներգ»-ն պետք է շահագրգռված լինեն, որ այս մասնագետները պատրաստվեն: Ընդհանրապես, եթե տվյալ գերատեսչությունը պատվիրում է մասնագիտություններ, նշանակում է այդ մասնագետների կարիքն ունի և պետք է շահագրգռված լինի, որ շրջանավարտներն ընտրեն այդ մասնագիտությունները:

- Ինչո՞վ պետք է արտահայտված լինի այդ շահագրգռվածությունը:

- Քարոզչական աշխատանքներ պետք է տարվեն դպրոցներում հենց տվյալ գերատեսչությունների կողմից, շահագրգռել դպրոցականներին, որ, օրինակ, նրանց բնակարանը կփոխհատուցեն կամ հավելյալ կորաթոշակ կտրամադրեն, տարբեր միջոցներով կխրախուսեն այդ մասնագիտություններն ընտրածներին:

- Տարիների օրինակը ցույց է տալիս, որ չընտրված մասնագիտությունների տեղերը կտրվեն այն մասնագիտություններին, որոնց դիմորդները շատ են, օրինակ՝ «Բուժական գործ»-ին:

- Ես չեմ ընդունում նման մոտեցումը: Եթե պետությունը պատվիրում է տեղեր, պետք է դրանց համար ճիշտ սկզբունք լինի, և հետևողական աշխատանքներ տարվեն համապատասխան լիազոր մարմինների, կառույցների կողմից: Պետք է անպայման ահազին գումարներ՝ ծախսել և մասնագետներ՝ բերել Հայաստանից, երբ Արցախում շատ կան խելացի, պրոֆեսիոնալ ունեցող դիմորդներ: Պետք է լրջորեն մտածել այդ մասին:

Ս. ԽԱՅԱՏՅԱՆ

ԱՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՅԻԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆՍՎԱԾՈՒՄ



Աշխարհում և մասնավորապես մեզ մոտ կրթության ոլորտում առկա են գլոբալ տարաբնույթ խնդիրներ, որոնցից ամենահարատապ ու տարածվածը կրթության հանդեպ սովորողների մոտիվացիայի բացակայությունն է: Ընդհանուր առմամբ արտահայտվում է կրթության ճգնաժամ, որին տրվում են տարբեր հիմնավորումներ՝ ֆինանսական խնդիրներ, շեքային պայմանների բացակայություն, կրթական ծրագրերի անկատարություն, ուսուցման և դաստիարակության գործում ծնողների արտահայտված անտարբերություն, մանկավարժների մասնագիտական, մեթոդական, հոգեբանական ցածր պատրաստվածություն և այլն: Մեր կարծիքով կրթության ճգնաժամն ունի շատ խոր արմատներ: Այն առկա է եղել տարբեր հասարակարգերում և բոլոր ժամանակներում: Պետք է ընդունենք, որ այն մշտապես կախված է եղել տվյալ հասարակարգի արժեքային համակար-

գից: Ցավոք, կրթությունը բոլոր ժամանակներում էլ երկրորդ պլան է մղվել:

Կրթության ճգնաժամի պատճառներից մեկը հասարակության մեջ անհատապաշտության միտումների զարգացումն է: Միայն սեփական «ես»-ի վրա կենտրոնացած լինելու հանգամանքը, ըստ էության, խաթարում է ամբողջ կրթության համակարգը: Մարդը կարծես թե կորցրել է կապը մեծ արժեքների, գաղափարների, տիեզերականի, աստվածային օրենքների հետ: Այսօր ամեն ինչ տեսնում է միայն իրեն, նա դարձել է փոքր դիտանցիայի էակ, չի տեսնում այն գաղափարները, որոնք կարևոր են մարդու զարգացման համար: Դպրոցում ուսուցիչը խոսում է մեծ գաղափարների, հայրենասիրության, ընդհանուր շահի, անձնագրության մասին, սակայն աշակերտը մտածում է իր մեղ «ես»-ի մասին: Այդ է պատճառը, որ չի ստացվում ուսուցչի և աշակերտների երկխոսությունը:

Կրթական համակարգի սխալ ռազմավարությունը և բացթողումն է: Այն պետք է լուծի ոչ թե կարճաժամկետ, այլ երկարաժամկետ խնդիրներ: Կարծես թե առկա են լավ շարժարկով ծրագրեր, մտքեր, գաղափարներ, պարբերաբար կրթության ոլորտում տեղի են ունենում բարեփոխումներ, սակայն դպրոցը լուծում է միայն կարճաժամկետ խնդիրներ, շուկան ապահովում է մասնագետներով, անտեսվում է բազմակողմանի զարգացած, լայն աշխար-

հայացք, արժեքային համակարգ ունեցող անհատի կերտումը:

Գլոբալ խնդիրներից մեկը տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումն է, ինչի հետևանքով մերօրյա մարդն ամբողջությամբ կախվածության մեջ է համացանցից: Առավել խոցելի են դարձել անչափահասները: Երեք-չորս տարեկան երեխան արդեն օգտվում է համակարգից, և կախվածությունն այնքան է մեծացել, որ հոգեբանականից բացի առաջացել են առողջական խնդիրներ: Խաթարվել է երեխայի ներաշխարհը, ուշադրությունը: Google անելը սկսել է փոխարինել մտածողությանը, զիտելիքին: Մեծագույն խնդիր է ուսուցչի հեղինակության անկումը, ինչն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Այսօր մանկավարժն ամենաքիչ վարձատրվող մասնագետն է, 120.000 դրամ աշխատավարձ ստացող անձը չի կարող ապրել ու արարել արժանապատիվ: Ուսուցչի մասնագիտությունն այլևս պահանջված չէ: Այն հիմնականում ընտրում են միջին և թույլ կարողություններ ունեցող շրջանավարտները: Եթե նախկինում ուսուցիչը եղել է գիտելիքի միակ և ամփոփարինելի աղբյուրը, ապա մեր օրերում այլընտրանք մեծ է: Խնդիրների ու պատճառների շրջանակը կարելի է անընդհատ շարունակել: Սիսայն հիմնական գործոնները, որոնք հանգեցրել են աշակերտների մոտ սովորելու մոտիվացիայի բացակայությանը: Կրթական համակարգի գերխնդիրը պետք է լի-

նի աշակերտների մոտ սովորելու պահանջմունքի ձևավորումը: Նշենք այն գործոնները, որոնք աշակերտների մոտ կծանրանում են նպատակային ու կանոնավոր կրթական աշխատանքի կայուն մոտիվացիա.

- ապահովել ուսուցչի հոգատար վերաբերմունք.
- ուսուցիչ-աշակերտ հարաբերություններ կառուցել ոչ թե որպես ներխուժում, այլ խորհուրդների հիման վրա.
- յուրաքանչյուր սովորողի հաջողության համար միջավայր և հնարավորություն ստեղծել.
- կրթական նյութը ներկայացնել զվարճալի, անսովոր.
- օգտագործել ճանաչողական խաղեր, քննարկումներ, բանավեճեր.
- դասապրոցեսում կիրառել աշակերտակենտրոն տարաբնույթ մեթոդներ:

Դասը պետք է կազմակերպվի այնպես, որ աշակերտը շահագրգռված լինի ուսումնական գործընթացով և ուրախությամբ շփվի ուսուցչի, դասընկերների հետ: Դասարանում պետք է լինի համագործակցության, վստահության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Ուսուցիչը պետք է խրախուսի և ամրապնդի աշակերտի ձեռքբերումները՝ դրանք համեմատելով ոչ թե այլ աշակերտների արդյունքների, այլ իր սեփական հաջողությունների ու անհաջողությունների, անհատական չափանիշների հետ: Ուսուցման նման ռազմավարության արդյունքը հաջողության

գրավչության, ինքնավստահության և որպես արդյունք օպտիմալ մոտիվացիայի և հաջող ուսումնասիրության աճն է:

Ժամանակակից աշակերտի կրթական մոտիվացիայի զարգացման կարևոր պայմանը ուսուցչի անհատականությունն է և աշակերտի հետ նրա հարաբերությունների բնույթը: Ուսուցիչն ինքը պետք է լինի ներքին շարժառիթներով ձեռքբերումների գործունեության օրինակ: Այսինքն՝ նա պետք է լինի անձ՝ մանկավարժական գործունեության նկատմամբ սիրո արտահայտված գերակայությամբ և դրա իրականացման նկատմամբ հետաքրքրությամբ, բարձր պրոֆեսիոնալիզմով և ինքնավստահությամբ, բարձր ինքնագնահատականով: Սովորելու մոտիվների ձևավորման գործում էական դեր են խաղում բանավոր խրախուսումները, գնահատականները, որոնք բնութագրում են աշակերտի կրթական գործունեությունը:

Ուսուցչի հոգատար վերաբերմունքը, նրա կողմից ուսումնական գործընթացում հատուկ մոտիվացիոն միջավայրի ստեղծումը կարող է փոխել ընդհանուր իրավիճակը և աշակերտների մոտ ձևավորել նպատակային ու կանոնավոր կրթական աշխատանքի կայուն մոտիվացիա:

Արթուր ՄԻՆԱՅԱՆ
Սպեի. ՅՈՒ. Պողոսյանի
անվան հ. 6 հիմնական
դպրոցի տնօրեն

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԱԵՔՎՈՆԴՈՅԻ ՄԱՐԶԻԿԸ ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



դասարանում: Հանրապետական մարզադպրոցի թաեքվոնդոյի մարզիչ Արա Մկրտչյանի սան իգոր ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ է մարզական էջի մեր հյուրը:

- Իգոր, ինչպե՞ս սկսվեց մարտարվեստի Ձեր ճանապարհը, ինչո՞վ գրավեց թաեքվոնդոն:

- Հինգ տարեկան էի, երբ լսեցի թաեքվոնդոյի մասին: Մանկությունից սիրում եմ սպորտը: Մի անգամ մարզիչ Արա Մկրտչյանը եկավ մեր դպրոց եւ գրուցեց մեզ հետ թաեքվոնդոյի մասին: Այդպես իմացա, որ կարող եմ հաճախել պարապմունքների հենց նրա մոտ ու սկսեցի մարզվել: Թաեքվոնդոն կորեական սպորտ է, ճանաչված է որպես օլիմպիական մարզաձև: Այն ավելի շատ հիմնված է ուժերի տեխնիկայի վրա: Կարելի է ասել, որ թաեքվոնդոյում 80 տոկոսը աշխատում են ուժերով, իսկ մնացածը՝ ձեռքերով: Ինձ դուր է գալիս այդ մարզաձևը, հատկապես որ կարողանում եմ մասնակցել միջազգային մրցաշարերի եւ ներկայացնել մեր հայրենիքը: Պարապմունքների ընթացքում եղել եմ պահեր, երբ չեմ ցանկացել շարունակել մարզումներս, բայց որոշ դադարից հետո, միեւնույն է, ինձ ձգել է այս սպորտը, ու ես կրկին սկսել եմ պարապել՝ հաղթահարելով դադարից հետո առաջ եկող դժվարությունները:

- Դուք Արցախի եւ Հայաստանի թաեքվոնդոյի բազմակի չեմպիոն եք, ինչպես նաեւ երկրից դուրս եք մասնակցել մրցաշարերի եւ դարձել չեմպիոն, փոխչեմպիոն: Կպատմե՞ք արտերկրում Ձեր մասնակցած առաջնությունների մասին:

- Առաջին անգամ թաեքվոնդոյի միջազգային մրցաշարի մասնակցել եմ 2015թ. ՌԴ Եսենտուկի քաղաքում, որի արդյունքում մրցանակային երկրորդ տեղն եմ գրավել: Երկրորդը Նաչիկոն մասնակցել եմ առաջնության, ինչի արդյունքում Արցախից ու Հայաստանից մասնակցող մարզիկներից միայն ինձ է հաջողվել դառնալ մրցանակակիր: Եղել եմ պահեր, երբ առաջին տեղ չզբաղեցնելն ինձ շատ է տխրեցրել, այնքան, որ այլեւս չէի ուզում պարապել: Սակայն մարզիչի հետ հոգե-

թաեքվոնդոն կորեական մարտարվեստ է, որի բնորոշ առանձնահատկություններից է մարտի ժամանակ ուժերի ակտիվ օգտագործումը ինչպես հարվածներ հասցնելու, այնպես էլ պաշտպանական գործողություններ կատարելու համար: Կորեական երեք հիերարխիաներից բաղկացած այս տերմինը նշանակում է ուժի եւ բռունցքի ճանապարհ: Ինչպես հայտնի է, արեւելյան մարտարվեստները հիմնականում իրենց անվանումների մեջ պարունակում են «դո» (ճանապարհ, ուղի) բաղադրիչը, ինչը մատնանշում է, որ մարտարվեստները լրիվ մարզանք կամ մարտ վարելու հմտությունները չեն, այլեւ կյանքի ճանապարհ են՝ հիմնված փիլիսոփայական, բարոյահոգեբանական սկզբունքների վրա, որոնց հետեւող մարդը մոտենում է կատարելության:

Այդ ճանապարհն է ընտրել մեր հերթական գրուցակիցը, որի համար թաեքվոնդոն միայն մարզաձև չէ, այլեւ կենսակերպ է իր հայրենիքը աշխարհին ճանաչելի դարձնելու միջոց:

Ծնվել է 2004թ. սեպտեմբերի 30-ին Ստեփանակերտում: Հաճախել է Ե.Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցը: Շարունակում է ուսումը Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 12-րդ բնագիտական դասարանում:

բանական գրուցներն օգնել են, որ հաղթահարեմ այդ, այսպես ասած, անկունային շրջանը ու պարտություններ ընդունեմ որպես մարտահրավեր՝ ավելի լավ պարապելու եւ հաղթելու համար: Սոչիում կազմակերպված առաջնությունների եմ մասնակցել բազմիցս, դարձել եմ չեմպիոն, փոխչեմպիոն: 2019թ. առաջին անգամ մտա ՀՀ թաեքվոնդոյի հավաքականի մեջ: Հայաստանի երիտասարդների միջեւ առաջնությունում հաղթելով՝ կարողացա մասնակցել Եվրոպայի առաջնության: 2019թ. մեկնեցի Իսպանիա, մասնակցեցի Եվրոպայի երիտասարդների միջեւ թաեքվոնդոյի առաջնության, երկրորդ մեծամարտում հաղթեցի թուրք մարզիկի: Մրցանակային 10 տեղից զբաղեցրի 5-րդ մրցանակային տեղը: 2021թ. սեպտեմբերին դարձա ՀՀ չեմպիոն, այնուհետեւ մասնակցեցի Բոսնիայում եւ Հերցեգովինայում կայացած երիտասարդների միջեւ Եվրոպայի առաջնության: 2022թ. ՀՀ մեծահասակների առաջնության չեմպիոն դարձա, որին կիստեղի մայիսին կայանալիք Եվրոպայի առաջնությանը մասնակցելու:

- Ձեր ունեցած մեծամարտերից որո՞նք եք առանձնացնում որպես ամենանշանակալից Ձեզ համար:

- 2016թ. ՌԴ Պյատիգորսկ քաղաքում մասնակցում էի միջազգային մրցաշարի: Ռուս մարզիկի հետ էի մեծամարտում, մարտը ընթանում էր հօգուտ ինձ, իմ ձեռքում էր հաղթանակը, բայց հանկարծ ոտքս բախվում է մրցագործին, ու կտրվում է ոտքիս մատը, չեմ կարողանում շարունակել մարտը, այդ պատճառով հաղթանակը տրվեց մրցակցիս: Ինձ համար շատ տխուր էր, ու այդպես էլ տպավորվել է ինձ մտ առ մարտը: 2018թ. ՌԴ Նաչիկի քաղաքում մասնակցում էի առաջնության: Եզրափակիչում ռուս մարզիկի հետ լարված մարտ ունեցա: Ծանր էր նրա հետ մեծամարտելը: Առաջին ռաունդում 10:0 միավորների հաշվով պարտվում էի, երկրորդում կարողացա հաշի-

վը դարձնել 20:10: Դժվար էր, բայց կարողացա երրորդ ռաունդում հավասարեցնել՝ 27:27: Ինտրիգային մեծամարտ էր: Անցանք լրացուցիչ: «Ոսկե միավոր»-ում ավարտեցինք 0:0 հաշվով: Մրցակիցս քիչ էր նկատողություններ ստացել, այդ պատճառով հաղթանակը տրվեց նրան: Ինձ մոտ այդ մարտը տպավորվել է որպես ամենադժվար ու ամենաինտրիգային մեծամարտ: Իսկ ամենանշանակալից թերեւս կառանձնացնեի 2019թ. Իսպանիայում թուրք մարզիկի հետ ունեցած մարտը: Մրցակիցս փորձառու էր, իսկ մարտը՝ լարված: Առաջին եւ երկրորդ ռաունդներում երկրպագուները ծափողույններով ու զանազան ճիչերով ոգեկոչում էին թուրք մրցակցիս հաղթանակի: Անկեղծ ասած՝ դժվար էր այդ մթնոլորտում առանց այն էլ փորձառու մարզիկի հետ մարտնչել: Մրցավարներն էլ մի կողմից էին վիճում ինձ միավորներ տալու հարցում: Ես հավաքեցի ուժերս ու ակտիվացա: Երրորդ ռաունդում ծափերը լռեցին: Ես հաղթում էի: Դժվար, բայց հաջող մարտ էր: Կարողացա ինձ առավելագույնս դրսեւորել եւ մաքուր հաղթել, որից հետո նույնիսկ մրցավարները վիճելու հիմք չունեցին, հաղթանակը միանշանակ տրվեց ինձ:

- Ինչպիսի՞ն պետք է լինի լավ մարզիկը:

- Մարզիկը պետք է լինի կարգապահ, նպատակասլաց, ձգտի դեպի իր առջեւ դրված նպատակները, անընդհատ աշխատի իր վրա, չկտրվի պարտություններից, դրսեւորի ավելի մեծ կամքի ուժ ու հավատա իր հաղթանակին: Թաեքվոնդոն պահանջում է ֆիզիկական ուժ, մկանների լավ ձգվածություն, դիմադրողականություն, դրա համար պետք է պարբերաբար պարապմունքները պահել:

- Հավանաբար Դուք համապատասխանում եք լավ մարզիկ լինելու նկարագրված կերպարին:

- Իմ կարծիքով, միշտ էլ տեղ կա ավելի լավը լինելու համար: Ինձ իդեալական չեմ համարում, բայց մոտիկ եմ իմ նկարագրած մարզիկի կերպարին:

- Սպորտից բացի ի՞նչ նախասիրություններ ունեք, կողմնորոշվե՞լ եք մասնագիտության ընտրությանը հարցում:

- Ջրադվում եմ մոդելինգով: Բրենդային հագուստների գովազդով եմ զբաղվում հիմնականում, բայց դա՝ որպես հոբբի: Կենսաբանությանը եւ անատոմիայով եմ խորացած հետաքրքրվում, որոշել եմ բժիշկ դառնալ: Ուզում եմ ընդունվել Երեւանի Հերացու անվան պետական բժշկական համալսարան, խորանալ բժիշկ-սրտաբանի մասնագիտության մեջ: Ինձ դուր է գալիս մարզական վերլուծել, կարողանալ առաջին բժշկական օգնությունը ցուցաբերել անհրաժեշտության դեպքում, իմանալ, թե ինչպես են աշխատում օրգանիզմի մեխանիզմները: Ուսումնասիրում եմ դիետաներ, ճիշտ սննդակարգը պահելու արդյունավետ ձեւեր, որը պետք է նաեւ սպորտում:

- Այսինքն՝ ապագա մասնագիտությունը կլրացնի սպորտին, ո՞չ թե՝ հակառակը:

- Միանշանակ: Միշտ երազել եմ առաջին հերթին լինել լավ մարդ, դառնալ բժիշկ, շարունակել իմ նախընտրած մարզաձևով պարապել եւ մասնակցել տարբեր մրցաշարերի: Ավելի հասունանալով՝ հասկացել եմ, որ

միայն երազելով չէ: Երազանքը կատարվում է այն դեպքում, երբ այն վերածվում է նպատակի: Իմ երազանքները իմ նպատակներն են հիմնադրում, որոնց իրագործմանն եմ ձգտում: Սպորտն ինձ համար կարծես թե ազարտ է դարձել, ես չեմ պատկերացնում, որ կարող է թողնեմ պարապմունքներս: Նշեմ, որ արեւելյան մարզաձևերը, այդ թվում՝ թաեքվոնդոն, միայն մրցումների մասնակցելու համար չեն: Դրանցով պարապող մարդիկ լավ հնարավորություն ունեն լինել ֆիզիկական լավ վիճակում, ունենալ առողջ մարմին, որովհետեւ մարզումները նպաստում են սիրտ-անոթային համակարգի եւ շնչառական ուղիների լավ աշխատանքին:

- Առջեւում Եվրոպայի առաջնությունն է, որին առաջին անգամ մասնակցելու եք մեծահասակների կարգում: Ինչպե՞ս եք տրամադրված:

- Մայիսի 19-22-ը Մանչեստրում կայանալիք Եվրոպայի առաջնությանը մասնակցելու եմ մարտական տրամադրվածությամբ, ձգտելու եմ լավ արդյունք գրանցել: Առաջին անգամ պետք է մասնակցեմ մեծահասակների կարգում: Դա նշանակում է, որ մրցակիցս կարող է լինել ավելի փորձառու, տիտղոսակիր, անգամ կարող է մեծամարտում այն մարզիկների հետ, որոնց երկրպագում եմ: Բայց միշտ էլ հնարավորություն կա հաղթելու համար, միշտ էլ կարելի է լավ պայմաններ ստեղծել եւ պարապել:

- Վշտակցությամբ ենք արձանագրում, որ Արցախյան 44-օրյա չարաբաստիկ պատերազմում, պաշտպանելով հայրենիքը, շատ ու շատ հայ բաջրողիների պես զոհվեց Ձեր հայրը՝ Պաշտպանության բանակի սպա Համայակ Կարապետյանը: Անդառնալի կորստի վիշտն ինչպե՞ս անդրադարձավ Ձեր մարզական կյանքին:

- Հայրս փորձառու գինձառայող էր, նրա կատարած սխրագործություններն անմոռանալի են, որոնցից մեկը, պատերազմի ժամանակ շրջափակման մեջ հայտնվելով, կարողացել էր իր հետ դուրս բերել 60 հոգու եւ փրկել: 2020թ. նոյեմբերին՝ մեկ օր դեպքից անց հայտնեցին սարսափելի լուրը: Բնականաբար բացասաբար էին անդրադարձել պատերազմն ու հորս կորուստը ինձ վրա: Թվում էր, թե մարզական կյանքին չեմ կարողանա վերադառնալ: Անկունային փուլերից մեկն էլ այդ ժամանակահատվածն էր: Բայց իմ մեջ ձեւավորված դիրքորոշումը, որ անկունը մարտահրավեր է եւ մոտիվացնող ուժ, գուցե եւ օգնեց դուրս գալ դրանից: Պետք է շարունակել մեր հայրերի գործը: Ես հպարտանում եմ նրանց հերոսությամբ: Պետք է տարբեր ոլորտներում հաջողության հասնել ու առաջ տանել նրանց գործը:

- Արցախցիներին ի՞նչ եք ցանկանում:

- Պատերազմը ոչ թե ակամայից վրա հասած երեւոյթ է, այլ դրանից պետք է դասեր քաղել: Արցախցիները պետք է հպարտ լինեն, որ ապրում են արյան գնով պահած հողի վրա: Ես հպարտ եմ, որ արցախցի եմ, եւ մրցույթների ժամանակ եթե չի ստացվում բարձրացնել Արցախի դրոշը, ապա ես միշտ կրում եմ այն իմ մարզահագուստի վրա: Ցանկանում եմ, որ արցախցիները կարողանան միշտ բարձր պահել մեր դրոշը:

ՄՈՒԱՅԹԱՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՇԵՐԹԱԿԱՆ ՀԱՂՈՒՆԱԿՆԵՐԸ

Ապրիլի 22-25-ը Երեւանում տեղի ունեցած ՀՀ մուսայթայի առաջնությանը Արցախի հավաքականը ներկայացավ 48 հոգանոց մարզական կազմով՝ 3 մարզիչ եւ 45 մարզիկ: Առաջնությունը կազմակերպվել էր բոլոր տարիքային խմբերի համար՝ պատանիներ, ավագ պատանիներ, երիտասարդներ եւ մեծահասակներ: Հայաստանի տարբեր մարզերից ու Արցախից մասնակցած մարզիկների ընդհանուր թիվը շուրջ 150 էր: Արցախի մուսայթայի հավաքականը տարիներ շարունակ ՀՀ առաջնություններում ճանաչվում է որպես լավագույն

թիմ, այս անգամ էլ բացառություն չէր: Այդ է վկայում նաեւ մեր մարզիկների գրանցած գերազանց արդյունքը. 27 մարզիկ դարձել է չեմպիոն, 10 մարզիկ զբաղեցրել է 2-րդ տեղ, իսկ 6 մարզիկ արժանացել է 3-րդ մրցանակային տեղի: Մարզիկները պարգևատարվել են մեդալներով ու դիպլոմներով: Ապրիլի 26-ին Ստեփանակերտի մանկապատանեկան մարզադպրոցում կատարվեց մուսայթայի մարզիկներին ու մարզիչներին շնորհավորելու եւ պարգևատրման արարողություն, որին ներկա էր նաեւ «Լուսարար»-ը: Մարզադպրոցի

տնօրեն Եմիլ Գրիգորյանը, ողջունելով մարզիկներին, շնորհավորեց ու գոհունակություն հայտնեց ինչպես դրսեւորած արդյունքների, այնպես էլ մարզադպրոցի մուսայթայի մարզիչների կատարած աշխատանքի համար: Հայաստանի առաջնությունում առաջին տեղ գրաված՝ մանկապատանեկան մարզադպրոցի եւ Արցախի մուսայթայի ֆեդերացիայի ավագ մարզիկների համար անակնկալ էր պատրաստվել: Մարզիկներին ու մարզիչներին շնորհավորելու էին եկել Արցախի ծանրամարտի ասոցիացիայի նախագահ Արթուր

Շիրինյանը եւ «Հայեր, միացե՛ք» բարեգործական նախաձեռնության ներկայացուցիչ Օլեսյա Պողոսկյան: Մուսայթայի քսանյոթ չեմպիոններն ու մարզիչներ Ալեքսան Աղաբալյանը, Գարեգին Աղաբալյանը, Հայկ Հայրապետյանը բարեգործական նախաձեռնության շրջանակում արժանացել են դրամական պարգևների: Օ. Պողոսկյանի ելույթով հանդես եկավ ու նշեց, որ, ներկայանալով այս արարողությանը, իր ոգեւորությունն է արտահայտում մարզիկների հերթական ձեռքբերման համար: Նա ավելացրեց, որ

«Հայեր, միացե՛ք» բարեգործական ընկերությունը համագործակցում է Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում եւ այլ վայրերում գտնվող սփյուռքահայերի, ինչպես նաեւ Արցախում խաղաղապահություն իրականացնող ռուսական զորակազմի հետ: Համագործակցության շրջանակում զբաղվում են արցախցիների հումանիտար աջակցությամբ: Քանի որ սպորտը դրա անբաժանելի մասն է կազմում, Արթուր Շիրինյանի հետ միասին ընկերությունը ծրագրել ու նախաձեռնել է համատեղ ջանքերով դրամական պարգևներ տալ մեր

ՄԱՐԶԱԶԵԿ

ՔԻՔՐՈՔՍԻՆԿ

Արցախում տարածված եւ մասսայակա- նացված մարզաձեւերից է քիքթոքսինգը: Մերտ համագործակցելով Հայաստանի Հան- րապետության քիքթոքսինգի ֆեդերացիայի հետ՝ Արցախում գործող ֆեդերացիան, որը գլխավորում է Ստեփանակերտի մանկապե- տական մարզադպրոցի քիք- րոքսինգի մարզիչ Արմեն Ղահ- րամանյանը, իր շուրջն է հավա- քել շուրջ 100 սան՝ սկսած 5 տարեկանից: Քիքթոքսինգի մարզումներ են անցկացվում Ստեփանակերտի 8-րդ, 10-րդ, 11-րդ դպրոցների մարզադահ- լիճներում, ինչպես նաեւ ֆեդե- րացիան համագործակցում է Արցախի վիճազուն-քունգֆուի ֆեդերացիայի հետ, որտեղ մարզվող սաները կարողանում են մասնակցել քիքթոքսինգի մրցումներին:

Ի՞նչ մարզաձեւ է քիքթոքսին- գը, ինչպե՞ս է ազդում դրանով պարապող մարդու վրա, ինչ- պե՞ս են իրենց դրսևորում ար- ցախցի մարզիկները այս մարզաձեւում: Օրերս առիթ ունեցանք ներկա գտնվելու քիք- րոքսինգի պարապմունքներից մեկին եւ թեմայի շուրջ զրուցեցինք մարզիչ Արմեն Ղահրամանյանի հետ, որը մանկուց զբաղ- վում է սպորտով, հասուն տարիքից սկսել է մարզչությամբ զբաղվել, ավարտել է Հայաս- տանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտը, սովորել մագիստ- րատուրայում եւ ստացել բռնցքամարտի մարզչի մասնագիտություն: Կատարելագործ- վելով քիքթոքսինգի մեջ՝ հանձն է առել Արցա- խում զարգացնել քիքթոքսինգ մարզաձեւը, ինչն ավելի ցայտուն է երեւում հատկապես վերջին տարիներս:

Քիքթոքսինգը մենապայքարային մարզա- ձեւ է, որը ներառում է ձեռքի եւ ոտքի աշխա- տանք: Այս մարզաձեւի գլխավոր միջազա- յին ֆեդերացիան քիքթոքսինգի կազմակեր- պությունների Համաշխարհային ասոցիա- ցիան է (WAKO), որի շրջանակում են գործում WAKO Armenia ֆեդերացիան. նախագահ՝ Գառնիկ Հայրապետյան եւ WAKO Artsakh ֆեդերացիան (նախագահ՝ Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյան): Քիքթոք- սինգը հայտնի է սիրողական եւ պրոֆեսիո- նալ տեսակներով: Քիքթոքսինգի մարզիկներ են

աշխարհահռչակ մարզիկներ, ծագումով հայ Գետրոգ-Ջիորջիո Պետրոսյանը, Մարատ Գրի- գորյանը, Արման Համբարյանը եւ շատ ուրիշ անվանի մարզիկներ: 2018թ.-ից սիրողական քիքթոքսինգը ճանաչվել է որպես օլիմպիա- կան մարզաձեւ: 2023թ. սպասվում են Եվրո-

ջին սպասվում է միջազգային մրցաշար, իսկ հոկտեմբերին Իռլանդիայում կկայանա Աշ- խարհի առաջնություն: Մարզիչ խոսքով՝ մար- զիկի զարգացման համար կարելու է փորձի ձեռքբերումը: Քիքթոքսինգը համաշխարհա- յին ճանաչում ունեցող մարզաձեւ է, մրցակ- ցային է, դժվար է մեղալ բերելը: Որպեսզի մեր մարզիկները կարո- ղանան ավելի բարձր պահել մեր երկրի պատիվը միջազգային մր- ցահարթակներում, անհրաժեշտ է ավելի շատ մրցաշարերի մաս- նակցեն, ավելի շատ փորձ ձեռք բերեն, որի համար պետք է ավելի մեծ ու կայուն ֆինանսական աջակցություն:

Արմեն Ղահրամանյանը խոր- հուրդ է տալիս բոլորին պարտա- դիր սպորտով զբաղվել: «Կարելու է, թե ինչ մարզաձեւով եք զբաղ- վում, ինքնեղ կարող եք որոշել, թե որ մարզաձեւն է ձեզ կամ ձեր երեխաների համար ճիշտ: Կա- ռելու է, որ դիմեք համապատաս-



պական խաղերը: Մարզիչ Արմեն Ղահրաման- յանը նշեց, որ ՀՀ քիքթոքսինգի ֆեդերացիան, որի մեջ է նաեւ Արցախի ֆեդերացիան, ճա- նաչվել է ՀՀ օլիմպիական կոմիտեի կողմից:

Արմեն Ղահրամանյանը ներկայացրեց, որ քիքթոքսինգի Արցախի սաները՝ սկսած 2016թ.-ից, մասնակցում են բազում մրցաշա- րերի, որոնց հետ կապված ծախսերի մեծ մասը հոգում են ԿԳՄՍ նախարարությունը եւ ֆեդերացիայի նախագահ Դավիթ Սարգսյա- նը: Մեր մարզիկները մասնակցել են Արցախի եւ Հայաստանի բազմաթիվ առաջնությունե- րի, միջազգային, Եվրոպայի մրցաշարերի, Աշխարհի գավաթի խաղարկության եւ Աշ- խարհի առաջնության: Աշխարհի գավաթի խաղարկությունից մեր սաները վերադարձել են մրցանակային պատվավոր տեղեր զբա- ղեցրած: 2021թ. Մոնտե Նեգրոյի Բուդվա քա- ղաքում կայացած քիքթոքսինգի Եվրոպայի պատանիների եւ երիտասարդների առաջնու- թյունում Արթուր Մովսեսյանը 13-15 տարե- կանների մեջ զբաղեցրել է մրցանակային 3- րդ տեղը: 2022թ. ՀՀ առաջնությունում ար- ցախցի մարզիկները մասնակցել են 19 հո- գով, որից 7-ը զբաղեցրել են 1-ին, 3-ը՝ 2-րդ եւ 4-ը՝ 3-րդ մրցանակային տեղեր: Մայիսի վեր-



Խան որակավորում ունեցող փորձառու մար- զիչների: Սպորտն առաջին հերթին առողջ ապրելակերպ է: Քիքթոքսինգը մարզիկների մեջ դաստիարակում է կարգապահություն,

մարզիկներին՝ այդպիսով խրախուսելով նրանց հաղ- թական ոգին: «Հայեր, միա- ցե՛ք»-ի ներկայացուցիչն առանձնանշել է, որ մար- զիկները մեր ապագա զին- վորներն են, մաղթել, որ նրանց անկոտրում ոգին միշտ լինի այդպիսին:

Մեր ուշադրությունից չէին կարող վրիպել մուայ- թայի մարզիկներ Անդրեյ ու Արման Ավետիսյաններ եղ- բայրները, ովքեր նույնպես ՀՀ առաջնությունից վերա- դարձել են ոսկե մեդալներով եւ իրենց հոր՝ Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացած Սա- սուն Ավետիսյանի երազանքն իրա- կանացնելով: 12-ամյա Անդրեյը սպորտով զբաղվում է յոթ տարեկա- նից: Լավ է մարզվում, հաճախակի է մասնակցում մուայթայի մրցաշա- րերին: ՀՀ առաջնությունում մեկ մարտ է ունեցել: Ասում է, որ լավ էր պատրաստվել, դժվար չէր հաղթե- լը: 10-ամյա Արմանը չորս տարի է, որ հաճախում է մուայթայի պա- րապմունքների: Նույնպես լավ է մարզվում: Առաջնությունում ունե- ցել է մեկ մարտ: Ասում է, որ մարտը եւ հեշտ էր, եւ դժվար, բայց կարո- ղացավ հաղթել: Մարզիկները շնոր-



հակալ են իրենց մարզիչ Ալեքսան Աղաբալյանին, որի շնորհիվ նրանք կարողանում են լավ մարզվել ու մասնակցել տարբեր մրցաշարերի, եւ ինչպես ցանկանում էր իրենց հայրը, կարողանում են դառնալ չեմպիոն: Ասում են, որ իրենց լավ են զգում, որ կարողացել են չեմ- պիոն դառնալ, բայց դա գազաթնա- կետը չէ: Երբ հարցնում ենք, թե ինչ երազանքներ ու նպատակներ ու- նեն սպորտի հետ կապված, միան- շանակ պատասխանում են, որ ու- գում են աշխատասեր ու քրտնա- ջան պարապել, որպեսզի ապագա- յում կարողանան մասնակցել աշ- խարհի առաջնության եւ հաղթել: Ավագ եղբայրը՝ Անդրեյ Ավետիսյա- նը, զրուցում է ինքնավստահ ու

տղամարդուն վայել վճռա- կանությամբ: Ասում է, որ ու- գում է աշխարհի չեմպիոն դառնալ եւ միշտ բարձր պահել մեր դրոշմը, ինչպես որ ուզում էր տեսնել հայրը: Սասուն Ավետիսյանը շխմա- յեց իր կյանքը եւ զոհվեց հայրենիքը պաշտպանելիս: Նրա որդիները չեն խնայե- լու ջանքերը, լինելու են լավ մարզիկներ, դառնալու են լավ մարտիկներ եւ շատ- շատերի նման լինելու են իրենց հայրերի կատարած վեհ գործերի շարունակողը:

Ութ վերջույթների մարտ. այդ- պես են անվանում մուայթայը կան թայլանդական բռնցքամարտը, որովհետեւ այս մարզաձեւում կա- րելի է հարվածներ հասցնել ութ վերջույթներով՝ բռունցքներով, սրունքներով, արմունկներով, ծնկ- ներով: Մարզաձեւն առանձնանում է մարտական չոր ու կոպիտ տեխնի- կայով, միաժամանակ համապա- տասխան պաշտպանիչների կի- րանմամբ: Արցախցուն վայել սպորտ. այդպես է բնութագրում ՄՊՄԴ մուայթայի մարզիչ Ալեքսան Աղաբալյանը: Ինչպես նա ասաց,

չնայած կոպտությանը, մուայթայն ունի լավ կողմեր, որը լավ է անդրա- դառնում մարզիկների վրա: Մար- զաձեւը լավ է զարգացնում մար- զիկների ֆիզիկական պատրաս- տությունը: Հատկապես մանկապա- տանեկան հասակում կարելու է, որ երեխաները զարգացնեն իրենց ֆի- զիկական տվյալները, որպեսզի ավելի հասուն տարիքում լինեն կոփված, դիմացկուն: Ֆիզիկական տվյալներից բացի մուայթայը հնա- րավորություն է տալիս, որ մարզիկ- ները դաստիարակվեն չեմպիոնի հոգեբանությամբ, հաղթական ոգով ու միշտ ձգտեն դեպի հաղթանակ ցանկացած ոլորտում: Արցախցիներ- ին բնորոշ է հաղթական ոգին, այդ պատճառով էլ շատերի մոտ հակում կա դեպի մուայթայ մարզաձեւը:

Մարզիչն ավելացրեց, որ անհ- րաժեշտ ֆինանսական միջոցներ ձեռքբերելու դեպքում մարզիկներն առաջիկայում մասնակցելու են մի- ջազգային առաջնության, Եվրոպա- յի եւ աշխարհի առաջնությունների: Մայիսի վերջին նախատեսում են Արու-Ղաբիում մասնակցել Մուայ- թայի աշխարհի առաջնության, որը կլինի մեծահասակների միջոց:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՈՒՍԱՓԵՆՔ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼԻՑ

Արևմուտք-Ռուսաստան հակամարտությունը իմ պարզ դիտարկմամբ գալիս է տասնամյակների խորքից: Նույնիսկ ԽՍՀՄ փլուզումը, որ նույնպես Արևմուտքի երկարամյա, ծրագրված պայքարի արդյունք է, չթուլացրեց այդ հակամարտությունը: Նախ նրա համար, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը՝ որպես այդ գերտերության «մայր» հանրապետություն, նախաձեռնեց ու ստեղծեց ԱՊՀ (Անկախ պետությունների համագործակցություն), հիմնականում որպես տնտեսական համագործակցման և փոխօգնության համար: Քիչ ավելի ուշ ստեղծվեց, նույնպես Ռուսաստանի նախաձեռնությամբ, ՀԱԽ (Հավաքական անվտանգության խորհուրդ), որի գործառնությունների շրջանակում ներառված են ամբողջ պետությունների անվտանգության հետ կապված հարցեր: Հենց ՀԱԽ-ի արագ արձագանքման ուժերը առաջին մկրտությունն ստացան Ղազախստանում հայտնի իրադարձությունների ժամանակ: Այս բոլորը, բնականաբար, չեն կարող Արևմուտքի հետաքրքրությունների շրջանակից դուրս մնալ: Պատմության ընթացքը ցույց է տալիս, որ Արևմուտքը ԽՍՀՄ-ին դեմ էր այս պետության կազմավորման պահից: Նրանց օժանդակությամբ սանձազերծվեց քաղաքացիական պատերազմ խորհրդային Ռուսաստանում, նաև որոշ հանրապետություններում: Հենց նրանք իրադարձությունները աշխարհամարտը՝ հույս ունենալով լայնածավալ պատերազմով վերջ տալ փլատակներից վստահորեն վեր հանող և միջազգային ասպարեզում օր օրի իր տեսակարար կշիռն ավելացնող առաջին սոցիալիստական պետությանը: Արևմուտքի պետությունները, ի դեմս ԱՄՆ-ի, Անգլիայի և Եվրոպական մյուս խոշոր պետությունների, ամեն ինչ անում էին, որպեսզի ԽՍՀՄ-ը պատերազմում պարտվի: Պատահական չէ, որ նախօրոք պայմանավորված երկրորդ ռազմաճակատի բացման համար կոնֆերանսներ իրավիճակից թեքում, ապա նաև՝ Ղրիմում, ու միայն, երբ նկատեցին, որ Կարմիր բանակի հաղթարշավը դառնում է անկասեցնելի, Արևմտյան Եվրոպայի տարածքում բացվում է երկրորդ ճակատը, ոչ թե ֆաշիզմը վերջնականապես տապալելու, այլ արևմտյան Եվրոպական պետությունները ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտից դուրս թողնելու նպատակով:

Երկրորդ աշխարհամարտում խորհրդային պետության տարած փայլուն հաղթանակը ծախողեց արևմտյան տերությունների պլան-ծրագրերը: Ես այն համոզմանն եմ, որ այս ծախողումը «արդարացնելու» նպատակով էր, որ ԱՄՆ-ը հրեշավոր քայլ կատարեց: Նախագահ Տրումանի հրամանով 1945թ. Գերմանիայի և Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո ճապոնական Չիրոսիմա և Նագասակի քաղաքները ստոմբոսի ռեպակոնդիցիան ենթարկվեցին: Հարյուր-հազարավոր խաղաղ բնակիչներ զոհվեցին, դարձան հաշմանդամներ: Ինձ թվում է, որ մեր հանրությունն էլ շատ քիչ բան գիտի այդ գերհզոր պետության, նրա վարած միջազգային քաղաքականության մասին:

ԱՄՆ-ը անկախություն ձեռք բերելուց հետո (18-րդ դարի վերջ) վարում էր խիստ ագրեսիվ քաղաքականություն միջազգային ասպարեզում: Այս պետությունը (չեն ուզում անդրադառնալ նեգրերի, տեղաբնակ հնդկացիների նկատմամբ իրականացրած անմարդկային բռնություններին) անցյալ դարի սիզբերից ակտիվ նվաճողական պատերազմներ էր մղում Լատինական Ամերիկայում: Նրանք օկուպացրին Կուբան, Հայիթի, Սան Դոմինգոն, զավթեցին Պանամայի ջրանցքը, Նիկարագուան: Ամերիկայի նախաձեռնությամբ հի-

սունականների սկզբին ստեղծվեց Հյուսիսատլանտյան ռազմական դաշինքը, որի գործունեությունն առաջին հերթին ուղղված էր ոչ թե անդամ պետությունների անվտանգությանը (որովհետև նրանց ոչ մի կողմից վտանգ չէր սպառնում), այլ խորհրդային Միությանը և սոցիալիստական համակարգի պետություններին: ՆԱՏՕ-ն մինչև օրս էլ վարում է ագրեսիվ ռազմական քաղաքականություն: Խորհրդային ավագ սերնդի քաղաքացիները լավ են հիշում 60-ական թվականների իրադարձությունները Կուբայի շուրջ, որ պատմության մեջ մտավ «Կարիբյան ճգնաժամ» անվամբ: Միայն Անաստաս Միկոյանի նուրբ ու ճկուն դիվանագիտության շնորհիվ հարթվեց ամեն ինչ, ասել է թե՛ կամիսվեց երրորդ համաշխարհային պատերազմը: Քաջարի կուբացիները այդ լարված ու կատաղի պայքարում հաղթող դուրս եկան և «Ազատության կղզի» պատվավոր անուն ստացան:

Չանցած տասը տարի, ամերիկացիները ռազմական ինտերվենցիա սկսեցին Վիետնամում: Ինչպես Կուբայում, այնպես էլ Վիետնամում ամերիկացիները փորձում էին արյան մեջ խեղդել սոցիալիզմի գաղափարները: Վիետնամական պատերազմը, որ տևեց շուրջ տասը տարի, ավարտվեց Ամերիկայի կատարյալ պարտությամբ:

Ամերիկացիների համար պատերազմի հերթական օջախը դարձավ Աֆղանստանը: Խորհրդային զորքերն այդտեղից հեռանալուց հետո ԱՄՆ-ը ծայրահեղականների դեմ պայքարելու պատրվակով զորքեր մտցրեց Աֆղանստան: Իմ պատկերացմամբ, Ամերիկայան կենտրոնական հետախուզական վարչության նպատակը ոչ թե աֆղան ժողովրդին օգնելն էր, այլ տարածաշրջանը այսպես կոչված հակառուսական պլանցարտ դարձնելը՝ թիրախում ունենալով նախկին խորհրդային հանրապետություններում հակառուսական որոշակի շրջանակներ: Սակայն այստեղ էլ ԱՄՆ-ը նպատակին չհասավ և պարզապես վերջերս իր գինվորները վերջնականապես դուրս բերեց տարածաշրջանից: ԱՄՆ-ը ռազմական անհաջողություններ գրանցեց նաև Մերձավոր Արևելքի տարածաշրջանում՝ Իրաքում, Սիրիայում, նույնիսկ այն բանից հետո, երբ այս տարածաշրջանում «լավ հենարաններ» ուներ՝ ի դեմս Իսրայելի և Թուրքիայի՝ որպես ՆԱՏՕ-ի հզոր պետություններից մեկը: Ինչպես երևում է, Սպիտակ տունը ամեն կերպ փորձում է լարվածության օջախներ ստեղծել ամենատարբեր երկրներում ինչպես ռազմական ներկայությամբ, այնպես էլ տնտեսական պատժամիջոցներով: Իրանի Իսլամական Հանրապետությունը մինչև օրս էլ այդ պատժամիջոցների ճիրաններում է գտնվում: Սակայն ինչպես ուսումնասիրել են վերլուծաբանները, Իրանը, ունենալով հարուստ բնական ռեսուրսներ, կարողանում է վերափոխել տնտեսության զարգացման ուղղվածությունը, միջազգային հարաբերությունների շրջանակները և խույս տալ շեշտակի անկումներից: Օգտվելով այդ իրավիճակից՝ նրանք սկսեցին ուրանի հարստացում մինչև 80-90%, որը գերտերություններին մտահոգվելու առիթ տվեց: Երբ գրում էի այս տողերը, հիշեցի բանաստեղծ Սուրեն Վահունու մի բանաստեղծություն՝ տպագրված 50-ական թվականների գրականության քրեստոմատիայում: Այն կոչվում է «Սպիտակ տունը» (այսպես է կոչվում Պենտագոնի վարչաշենքը):

Սուրեն Վահունու բանաստեղծին երևի քչերը գիտեն: Պարզ է, նրա ոչ մի ստեղծագործություն դասագրքերում չի եղել: Ս. Վահունին (Խաչիկյան, 1910-1983) շուրջ երեսու-

տարի Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի տնօրենն է եղել: Ցավոք, բանաստեղծությունից կցկտուր տողեր են հիշում

*Ինչո՞ւ սպիտակ կոշիկ այն տունը,
Ուր սև են բոլոր գործերն անխտիր,
Որի պատերից չի ջնջվի երբեք
Խոշտանգված նեգրի կարմիր արյունը:
Բավ է, փոխեցեք այդ տան անունը
Կամ էլ վարձեցեք այլ գույնի մի շենք,
Որ չասենք սպիտակ ու սև հիշենք:*

Ռուս-ուկրաինական պատերազմի հրահրումը Սպիտակ տան հերթական սև գործերից է: ԱՄՆ-ի վարչակազմը վերջին ճիգերն է գործադրում՝ պահպանելու իր հեգեմոն դերը աշխարհում և՛ ռազմական, և՛ տնտեսական, և՛ քաղաքական բնագավառներում: Նրանց համար խորթ է երկրորդ բևեռի առաջացումն ու զարգացումը արևելյան կիսագնդում՝ Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան գերտերություններով հանդերձ: Ամերիկացիներն իրենց սև գործն իրականացնում են ամբողջ ճակատով. ուկրաինացիների ձեռքերով կռվում են, իրենց համախոհ պետությունների ձեռքերով փորձում են ոչնչացնել տնտեսությունը: Երբ Արևմուտք ենք ասում, Ամերիկայից հետո անգլիացիներն են իրենց ագրեսիվ բնույթով հանդես գալիս Ռուսաստանի դեմ, ինչպես նաև ժամանակին ԽՍՀՄ-ի դեմ: Դարերի խորքից եկող հայ-թուրքական հակամարտության ժամանակ, ներառյալ նաև արցախյան 30-ամյա պայքարը, անգլիացիները միշտ էլ օժանդակել են թուրքերին՝ անցյալ դարակազմում տարածաշրջանում՝ անգամ Շուշիի բերդում ունենալով ռազմական ներկայություն: «Մեր նավերը ձեր սարերը չեն կարող բարձրանալ», - հեզմանքով էին բավարարում մեր խնդրանքները:

Իմ նպատակը ոչ այնքան Արևմուտքի ագրեսիվ կեցվածքը, որքան երկնամասի առաջ կանգնած հասարակության որոշակի շերտերին իրավիճակը ներկայացնելն է: Միավրած չեն լինի, եթե ասեն, որ մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, որ առանց հուսալի դաշնակցի ղեկավար կլինի սեփական ռեսուրսների հաշվին շտկել խիստ կորացած մեջքներս: Հիշենք թեկուզ հենց Իսրայել Օրում, որ տարիներով դեգերեց Եվրոպայի խոշոր տերությունների դմբերին ու վերջում հուսախաբված դարձավ Ռուսաստան և չսխալվեց: Ռուս-հայկական հարաբերություններն սկսեցին ակտիվանալ հենց այդ ժամանակներից: Հայաստան-Արևմուտք, Հայաստան-Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների ակտիվացումն ինչ-որ տարակուսանքի առիթ է տալիս: Թվում է՝ ինչպես Արևմուտքը, այնպես էլ թուրքական կուլիցիան փորձում է օգտվել Ռուսաստանի (ուկրաինական պատերազմի պատճառով) զգուշացումից և Հայաստանի նպարտությունից շուտափույթ պայմանագիր ստորագրել ու ստեղծել սահմանագաման հանձնաժողով և գործի անցնել առանց երրորդ պետության միջնորդության: Արդյոք խաղաղության պայմանագրի շուտափույթ ստորագրումից հետո Ադրբեջանը չի՞ պահանջի խաղաղության զորակազմի ավելորդ լինելու փաստը: Խաղաղության պայմանագրից հետո խաղաղապահներն էլ ո՞ւմ են պետք: Փաստաթուղթը ստորագրելուց հետո սա կլինի ազդեցիկ առաջին պահանջը: Բոլոր տարածաշրջանային կարևոր հարցերի շուրջ Հայաստանը խորհրդածել է նախ Ռուսաստանի իշխանավորների հետ, նոր միայն Եվրախորհրդի, Եվրամիության: Սակայն Հայաստանի վարչապետը ապրիլի 6-ին նախընտրեց Եվրախորհրդի նախագահ Շ. Միշելի միջնորդությամբ հանդիպել Ի. Ալիևի հետ

Բրյուսելում: Ալիևը խոստովանել է, որ բրյուսելյան հանդիպումը Ադրբեջանի համար եղել է նպաստավոր և արդյունավետ: Երկար սպասումներից հետո Հայաստան ժամանեցին Մինսկի խմբի ֆրանսիացի և ամերիկացի համանախագահները շաբաթվա կտրվածքով և այն բանից հետո, երբ Ռուսաստանի գլխավոր դիվանագետը Մոսկվայում հայտարարում է, որ ֆրանսիացի և ամերիկացի դիվանագետները հրաժարվել են Ռուսաստանի հետ միասին համագործակցելուց: Այս բոլորը չե՞ն հուշում, որ փորձ է արվում նսեմացնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում, այդ նույն ուղղվածությունը չունե՞ն նաև Փառուխի հետ կապված դեպքերը: Ռուսաստանի հետ հարաբերություններից խուսափելը, Ռուսաստանին որպես միջնորդ չընդունելը հայ-ադրբեջանական հարաբերություններում շատ ավելի ձեռնտու են Ադրբեջանին նախ նրա համար, որ իր թիկունքում ունի Թուրքիային և երկրորդ՝ Ռուսաստանը դառնում է անվտանգելի: Նախագահ Պուտինը առանց վարանելու հայտարարեց, որ Ուկրաինա հանրապետության ստեղծումը Լեհի-նի նախաձեռնությունն է, իսկ ՄԱԿ-ի նախագահ Գուտերեշի հետ հանդիպման ժամանակ բացեիքաց հայտարարեց. «Ես հիշում եմ միջազգային դատարանի՝ Կոստովոյի նկատմամբ ընդունած որոշումը: Այնտեղ ասված է, որ ինքնորոշման համար այսպես կոչված «մայր» պետության կարծիքը չի հաշվվում»: Սա հուսալի փաստարկ է, որ կարելի է օգտագործել նաև Արցախի պահով: Ռուսական կողմի այս պնդումները չեն կարող չմտահոգել Ադրբեջանին:

Ալիևը շարունակում է ինչպես Ադրբեջանի հանրությանը, այնպես էլ Բաքու ժամանած քաղաքական գործիչներին, դիվանագետներին համոզել, որ Մյունխը՝ Ջանգեզուրը, նույնիսկ Երևանը ադրբեջանական տարածք են: Վերջերս մի հանդիպման ժամանակ լկտիաբար հայտարարեց, որ Հայաստանի հետ դիվիդիտացիայի հարցերը կլուծեն հենց նման քարտեզներով, որտեղ այդ տարածքները ադրբեջանական են:

Ես չեմ ժխտի այն, որ Ալիևն իր ձեռքի տակ ունի նման քարտեզներ, այն էլ՝ ուրիշ երկրներում ստեղծված, իբր պատմության մաս, իր առաջարկով: Նույն այդ հանդիպման ժամանակ նա հայտարարեց. «Եվրամիությունը շատ ազնիվ գործընկեր է, այն կարող է փոխարինել նույնիսկ Մինսկի խմբին»: Սա նախ հուշում է, որ Ռուսաստանը անվտանգելի է դարձել Ադրբեջանի համար: Մյուս կողմից էլ, չնայած շատ անգամ է հայտարարել, որ Մինսկի խումբն այնպես անելիք չունի, այն վաղուց իրեն սպառել է, այնուամենայնիվ, զգում է, որ կառույցին միջազգային հանրությունը դեռևս հաշվում է Արցախի հարցի լուծման հիմնական օղակ:

Մենք ապրում ենք պատմական մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ սխալվելու իրավունք չունենք, այն կարող է լինել ճակատագրական: Շատ ավելի լավ կլինի, որ Արցախի իշխանություններն էլ փորձեն ստեղծել Ստեփանակերտ-Մոսկվա երկխոսության դաշտ: Ինձ թվում է, որ հնարավորության դեպքում օգտակար կլինի նաև Ստեփանակերտ-Թեհրան երկխոսության հնարավորություն ունենալ: Քաղաքական դաշտում ակտիվանալ անհրաժեշտություն է: Նույնպիսի անհրաժեշտություն է նաև Արևմուտքի հետ շատ կշռադատված հարաբերություններ ունենալը՝ նրանց խարդավանքների զոհ չդառնալու համար:

Լեան ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. ԵՄԻՇՅԱՆ

ԶՆՈՐՀԱՆՐԵՍ

ԳԻՐՔ ՏԵՍԱԾԻ ԵՎ ՎԵՐԱԴՊՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Մարտակերտի մշակույթի պալատում մայիսի 3-ին տեղի ունեցավ ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, Վ. Բալայանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի հերթական «Պատերազմական օրագիր» գրքի շնորհանդեսը: Ներկա էին շրջվարչակազմի պատասխանատու աշխատողներ, ուսուցիչներ, աշակերտներ, զոհվածների հարազատներ, հյուրեր Ստեփանակերտից:

Գրքում ներկայացված են 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո հեղինակի գրառումները:

Մարտակերտից տարհանվելու օրվանից՝ սեպտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 7-ը՝ Ստեփանակերտը պարտադրված լքելու ժամանակահատվածը, հեղինակը, թշնամու մահաբեր արկերի տակ, չլքելով ուսուցչի, մտավորականի իր դիրքը, գրի է առել ամեն օրվա իրադարձությունները: Ուսուցիչը, որը մինչ այդ աշխատում էր իր «Մանկավարժի օրագիր» 4-րդ գրքի վրա, այն մի կողմ դրեց և իր պարտականությունը համարեց պատերազմի քրոնիկոնը գրառելը: Գրքի խորագրերն արդեն իսկ հուշում են տվյալ ժամանակահատվածի բովանդակությունը. «Գրառումներ ապաստարանից», «Դեպի փրկության հանգրվան», «Ցասուն», «Մենք վերքերը

մեզ ուժեղ դարձնող հաղորդագրությունները: Ես զգում եմ, թե ինչպես է մեզ հետ խոսում հողը: Հողը ինչպես է երկխոսության մեջ մտնում, արշալույսներն ինչպես են բարևում, մայրամուտները՝ քեզ մղում հաջորդ օրվան: Շատ հետաքրքիր գիրք է, քանի որ

գույն արժեքները զնահատող: Տիկին Պողոսյանն իր տեսակով լավ օրինակ է բոլորիս համար: Պատահական չէ, որ արդեն լույս է տեսել նրա վեցերորդ գիրքը, և շարունակում է ստեղծագործել: «Պատերազմական օրագիր»-ը բոլորիս հա-



Յուլյա Ավանեսյան, Մոխրաթաղի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:



«Պատերազմական օրագիր» գիրքը մեր 44-օրյա պարտում ու չպարտ օրերի քրոնիկոն է, մեր հերոսացած տղաների սխրագործությունը: Գրքի հրատարակման առաջին իսկ օրից իմ մեջ ապրում են իրարամերժ զգացումներ: Ես ուզում եմ լինել լավատես և հուսալ, որ մոտ ապագայում կլինեն այնպիսի շրջադարձային իրադարձություններ, որ տիկին Պողոսյանի գրչի շնորհիվ լույս աշխարհ կգա «Հաղթական օրագիր» գիրքը: Ծանր է խոսել այս գրքի մասին, առավել ևս՝ որդեկորույս մայրերի խոնարհված հայացքների ներկայությունը: Ես մտածում եմ, որ շատ ծանր ցավ է տարել հեղինակը գիրքը լույս աշխարհ բերելու ողջ ճանապարհին, քանի որ այստեղ ամեն մի տառի, ամեն մի բառի, մտքի շաղախի մեջ տեսնում եմ կսկիծ, ցավ, մորմոռ, անդառնալի կորուստ: Բայց ես ավելի շատ կտխրեմ, եթե այդ իրադարձություններին արձագանքող չլինեք, և մեր հերոսների համար չգրվեր նոր էջ: Վստահորեն հնչեցնում եմ այս ամբիոնից. տիկին Պողոսյան, դուք բացառիկ կերպար եք, որի մեջ իշխում է երևույթներին արագ արձագանքելու տաղանդը: Եվ այս գիրքը իրադարձություններին արագ արձագանքելու շնորհիվ է նաև: Ձեր լինելությամբ շահում է ոչ միայն հայոց դպրոցը, ոչ միայն հայոց լեզվի և գրականության մեթոդաբանությունը, այլև Արցախի տարեգրությունը: Ձեր պատգամը մեզ համար օրինակ է, որ այս իրողություններին և մեզ պատուհասած դժվարին կյանքի չարիքին մենք կարող ենք դիմակայել՝ միաբանվելով, համախմբվելով արվեստի, մշակույթի, գրականության շուրջը:

Անի Հարությունյան, Մարտակերտի Վ.Բալայանի անվան հ.1 մ/հ դպրոցի ֆրանսերենի ուսուցչուհի:



«Պատերազմի օրագիր»-ը ստանալու հենց առաջին պահից ուշադրությունս գրավեց օրագրի գաղափարից բխած՝ տիկին Ղարախանյանի նախաբանի այն միտքը, որ գիրքը հորդորում է՝ «Ուսյալ սերնդով փրկենք կորսված գալիքը»:

Սա պատգամ է բոլորիս, քանզի կորությունն է մեր ուժը: Մեզ երկինքն է իրամայրս ապրել, մենք երկնքին արժանավայել կյանք ենք պարտք: Ես հավատում եմ, որ կգա մի օր, և մութ ամպերը կցրվեն, հույսի արևը վառ կփայլի հայոց երկնակամարում, երկնքի լուրջ կազդարարի ազատ ու անկախ Արցախի վերածնունդը: Հավատում եմ, և իմ հավատը ուժ ունի:

Նաիրուհի Բալայան, Մարտակերտի Վ.Բալայանի անվան հ.1 մ/հ դպրոցի անգլերենի ուսուցչուհի, Արցախի հերոս Վլադիմիր Բալայանի դուստր:



Տիկին Պողոսյանը դժվարին և հայրենամարտի գործ է կատարել՝ սերունդներին պահ տալով հերոսական ու արյունոտ պայքարի պատմությունը: Հեղինակի ըմբոստ և անսասան ուժի ծնունդ է այս գիրքը: Ընթերցողը տեսնում է հայրենասիրության մեծ ուժը, որն անմարդավար պահերին առաջ է մղում մարտնչողներին: Այստեղ ներկայացված նահատակները պայքարել են ոչ միայն Արցախի, այլև պատմական հայրենիքի փրկության համար: Շատերի համար այս գիրքը սփոփանքի մի փոքր միջոց է, այն խելոցում է փղծկոցը մեր կոկորդում, բայց միևնույն ժամանակ լսելի է դարձնում ամբողջ աշխարհով մեկ: Իզուր չեն ասում՝ գեներալ Վաչագանյանը գործություն ունեն: Այս գիրքը սպառնալից է, որ կարող ենք վեր հանել մոխիրներից:

«Պատերազմական օրագիր»-ը լույս է տեսել ԱՀ ԿՊՍՍԵ երաշխավորությամբ և ամերիկաբնակ Նորա Պետրոսյանի ֆինանսական աջակցությամբ:



երգեր կշինենք», «Տարհանվածներս», «Հետպատերազմյան դպրոց», «Վերածնունդ» և այլն:

Շնորհանդեսի առաջին մասը նվիրված էր 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակին: Գրքի շափկին տեղ են գտել Մարտակերտի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի զոհված շրջանավարտների լուսանկարները: Դպրոցականները հայրենասիրական բանաստեղծություններով, երգերով ոգեկոչեցին հերոսացած տղաների հիշատակը:

Միջոցառման երկրորդ մասը նվիրված էր գրքի արժանիքներին, նրա նշանակությանը: Շնորհանդեսը լի էր գեղեցիկ պահերով, որտեղ արժևորված էր ուսուցիչը: Նախ կատարվեց զինծնոնի արարողություն Մարտակերտի ԿՍ բաժնի վարիչ Դավիթ Լալայանի ձեռամբ:

Գրքի խմբագիր Լուսինե Ղարախանյանը այն ժամանակ ԱՀ ԿՊՍՍ Դախարար, ներկայումս Նախագահի խորհրդական, որի անմիջական նախաձեռնությամբ է լույս տեսել գիրքը, ելույթ ունենալով, ասաց, որ «Պատերազմական օրագիր»-ի մեջ Նատաշա Պողոսյանն ուսուցչին հաջողվել է տառապանքի ընթացքի մեջ կերտել մեր սխրանքի կենդանի լեզունը. «Դու շոշափում ես հայ կնոջ և հայ ուսուցչի ահեղ վճռականությունը: Ես ընդգծում եմ ահեղ բառը, որովհետև Մարտակերտ գալու ճանապարհին զգում էի լեռների, սարերի՝

այնտեղ կա կամք, վճռականություն, կա գալիքը փրկելու ուրվապատկեր և մի շատ կարևոր հաղորդագրություն՝ կախե՛ք ձեր վզից որպես բանալի խաչը և կրթե՛ք ուսյալ սերունդ, որը փրկելու է գալիքը:

Հաղթանակները վաղեմության ժամկետ չունեն, դրանք մերն են: Եվ քաջ են ու սխրագործ նրանք, ովքեր տեր են կանգնում իրենց պարտությանը: Մենք շտկելու, խմբագրելու ենք մեր սխալները և փրկելու ենք մեր գալիքը»:

Շնորհանդեսին ելույթ ունեցան մանկավարժներ, զոհվածների հարազատներ:

Ռուզաննա Հարությունյան, Մարտակերտի Վ. Բալայանի անվան մ/հ դպրոցի տնօրեն:



վարժ: Նպատակալաց, աշխատասեր, դրական էներգիայով լեցուն, մաքառող, բարձրա-

մար սպասված գիրք է, որում ամփոփված են 44-օրյա մեր ծանր պարտումները: Գիրքը նաև մեր զոհվածների հարազատների համար սփոփանքի, մխիթարության մի հատիկ է: Այն պատերազմը և կյանքը կապող օղակ է:

Գրքի հեղինակը պայքարում էր թիկունքում և, 42 օր մնալով հրետակոծության տակ, վախի, ցավի, տառապանքի մեջ, իր ֆեյսբուքյան ընկերներին թևեր էր տալիս, հույս ու հավատ ներշնչում գալիքի նկատմամբ: Նրանց մեկնաբանություններում նա նույնքան զնահատված էր որպես մեծ մանկավարժ, մեծ հայրենասեր, կամքով ամուր ու անկոտրում:

Ալվարդ Ավթանդիյան, 44-օրյա պատերազմում զոհված Կանո Բախշիյանի այրի:

Գրքում Ձեր խոհերն են, օրվա ապրումները՝ պատերազմի առաջին օրից դարձած օրագիր: Պատերազմը մեզնից շատ բան խլեց, բայց ինչպես բոլոր ժամանակներում, հիմա էլ այն իրենից հետո դասեր է թողել սերունդներին, և Դուք՝ իբրև վաստակաշատ մանկավարժ, այդ դասը փոխանցում եք նրանց՝ կրելով պատասխանատվություն՝ արժանավայել ներկայացնել այն որպես աշակերտակենտրոն բաց դաս, որ հենց իրենք ներկայացնեն հերոսներին: Գրքում կան շարադրություններ, որոնք կյանքի դասերն են՝ ոչ թե թանաքով, այլ արյունով գրված:

Արշալույս Գալստյան, գյուղ, եղբայր կորցրած, Նոր Կարմիրավանի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Հապարտության, ցավի ու ավստանքի զգացումները մարտնչում են ամեն անգամ, երբ բացում եմ գիրքը: Ամեն էջից կարծես լսվում է մեր տղաների զիծ ձայնը: Այստեղ այն տղաներն են, որոնք բոլորս պարտք ունենք տալու և ամեն ինչով նպաստենք, որ գալիք սերունդներով հասնենք հաղթանակած հայրենիք ունենալուն: Գիրքն ավետում է մեզ, որ սահմանը սկսվում է զինվորով: Նվիրումի դասեր պետք է քաղել հերոսներից, ոգեշնչել գալիք սերունդներին, դաստիարակել հայրենապաշտ ու պահպան քաղաքացի: Գիրքը սպեղանի է բոլորիս չսպիացած վերքերին: Այն լուսավորում է բոլորիս հոգիները, մեր մեջ արթնացնում է լավագույն ձգտումներ, սրում միտքը, մեղմացնում սիրտը: Սա այն անգնահատելի արգասիքն է, որը նպաստելու է սերունդ կրթելու, ոգեշնչելու և մասնակիցը դարձնելու նոր կյանքի, նոր հայրենիքի ստեղծման ու պահպանման արարչագործ նախաձեռնությանը:



ԱՊՐԵԼ ԵՎ ԱՊՐԵՑՆԵԼ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԽՈՐՀՐԴՈՎ

Գարունն այս անգամ մի կերպ սողոսկեց մեր հեքիաթային օրրանը՝ հաղթահարելով ձմռան ստեղծած բազում արգելքներ: Եկավ ու բազմեց մեր հպարտ լեռներին, տարածվեց ու թագավորեց ամենուր, կյանքի կոչեց շուրջբոլորը: Միայն թե... Միայն թե արցախցին դեռևս չի կարողանում լիաթոք շնչել գարնանամուտի անուշաբույրը, վայելել բնության զարթոնքն ու նրբագեղությունը: Պատճառը գիտենք. այն անամոք վերքն է մեր սրտի, պատճառն այն հազարավոր աչքերն են, որոնք միայն երկնքից կարող են նայել մեզ, այն կյանքերն են, որոնք զրկվել են

պակցելով իրենց ապրածն ու զգացածն իրականության հետ՝ մեր սաները, իրենց աղոթքն առ Աստված ուղղելով, սկսեցին ելույթը:

Թո՛ղ «Տեր, ողորմեա»-ի ելևէջները երկնքում միահյուսվեն բյուր հայրողիների լռած ձայներին և հասնեն Աստծուն, և Տերը զորավոր ի կատար ածի: Մենք խաղաղություն ենք տենչում և, զատկական ճոխ սեղանների մոտ բարձրացնելով զինու բաժակները, և մեկ անգամ շեշտեցինք, որ ինչպես Քրիստոսն իրեն զոհեց հանուն մարդկության փրկության, այնպես էլ մեր անմահ քաջերն իրենց արյունը թափեցին մեր ազատ կյանքի իրավունքի, մեր ինքնության ու հայրենիքի համար: Ու մենք ուղղակի պարտավոր ենք այստեղ ապրել հաստատուն կամքով, ելուզակ թշնամուն պարտադրել հաշտվել մեր կամքի ու պատմական իրականության հետ:

Թշնամու ուղիղ նշանակետում գտնվող դպրոցի բակից հնչող աշակերտների ելույթը հաստատուն ու ամերկբա պատասխանն էր նրանց բարբաջանքներին, հնչեցվող մուղամներին, անասնական կոչերին: Ազգային-ժողովրդական երգ ու պարի նվագները հերթական ապացույցն էին այն փաստի, որ այս հողը հայինն է՝ արցախցունը, այստեղ մենք ենք՝ սոսեցիներս՝ ամուր կառչած մեր հող ու ջրին, մեր Լուսավորչի Սուրբ սարին: Մեր աշակերտները քաջ գիտակցում են, որ իրենք են վառ ապագայի առիավատյան, որ իրենցով է կշռվում մեր ամեն ինչը՝



լիարժեքությունից, պատճառը մեր կորուսյալ ու զեղվարված հայրենիքն է...

Յենց հանուն այդ աչքերի, հանուն նրանց պայքարի նպատակ դարձած մեր անկախության, հանուն այն մանուկների, ովքեր դեռ հաղթանակի անհատունում բերկրանքը պիտի վայելեն մեր հայրենիքում, մենք պարտավոր ենք ապրել ու ապրեցնել, կյանք ու ժպիտ, խի՛նդ ու եռանդ պարգևել մեր սերունդներին, սաներին, որոնց մանկահասակ հոգիները հասցրին թրծվել պատերազմի թոհուրոհում, կոփվել, ամրանալ՝ երբեք ու երբեք չմոռանալով արհավիրքը:

Եվ հենց նրանց համար, առօրյա բացասական տրամադրությունը փոխելու, դրական լիցքեր հաղորդելով՝ փոքր-ինչ դաժան իրականությունից կտրելու համար Սոսի միջնակարգ դպրոցում հաճախակի կազմակերպվում են ոչ միայն ռազմահայրենասիրական, այլև գրական-զեղարվեստական, ազգային-ժողովրդական, խաղային-մրցութային միջոցառումներ:

Ապրիլի 19-ին Մարտունու շրջանի Սոսի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում ԱՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցաբար կազմակերպված «Զատկական տոն»-ը հերթական այդպիսին էր: Այն համեմված էր ազգային-ավանդական երգ ու պարով, խաղերով, զատկական առատ ու գունագեղ սեղաններով:

Աշակերտները մեծ հետաքրքրությամբ ու պատասխանատվությամբ, սիրով ու հաճույքով էին պատրաստվել: Նրանցից յուրաքանչյուրն իր մեջ կրում էր Զատկի խորհուրդը՝ նորը հնից գատելը, հարությամբ նոր կյանքի կոչվելը: Չէ՛ որ նրանք տենչում են այն նոր ու լուսավոր ապագան, որ պետք է ծնվի մեր հայրենիքի հարությունից հետո: Փոխկա-



ազատությունը, անկախությունը, արևաշող վաղորդայնները, երկնքի լազուրն ու արտերի ոսկին:

*Թող ամեն մանկան աղոթքը բարձրանա,
Աչքերի արցունքն ու ցավը վերանա,
Թող խաղաղ բացվի երկինքը,
որ հավերժ ապրի մանկիկը,
Թող երբեք էլ չտեսնենք արհավիրքը:*

Այս տողերը հնչեցնելով որպես վերջաբան՝ ամրակայեցինք միջոցառման ողջ ելույթում ու խորհուրդը:

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սոսի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն

«ԼԵՆԱՅԻՆ ԱՐԳԱՒ»-Ը՝ ՀՀ ՖՈՒՏԲՈՒԼ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԶԵՄՊԻՈՆ



ՀՀ Սիսիան քաղաքում կայացած Ֆուտբոլի Առաջին խմբի առաջնությանը «Լենային Արցախ» ֆուտբոլային թիմը՝ 4:1 հաշվով հաղթելով «Գանձասար»-ին՝ նավաճել է ՀՀ չեմպիոնի տիտղոսը:

Մայիսի 9-ին Ստեփանակերտի Ստեփան Շահումյանի անվան հանրապետական մարզադաշտում մարզիկներին դիմավորելու էին եկել ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, մարզաշխարհի ներկայացուցիչներ, ֆուտբոլասերներ:



«Ունեցել ենք 26 հանդիպում, որից 22-ը ավարտվել է «Լենային Արցախ»-ի հաղթանակով: 69 միավորով առաջ անցնելով մասնակից թիմերից՝ մեր թիմը առաջին լիգայի չեմպիոն դարձավ ժամանակից շուտ: Առաջնությանը պատրաստվում ենք ամառվանից: Հրավիրել ենք փորձառու խաղացողներ, մասնակցել մարզական հավաքների, խաղացել բարձրագույն թիմերի հետ: Արդյունքում այսօր հաղթանակ ենք տոնում», - ասում է թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Աղամյանը:

ՀՀ Առաջին խմբի առաջնության հաղթանակը մեր թիմին հնարավորություն կտա մասնակցելու Հայաստանի պրեմիեր լիգային:

Երգ ու պարով չեմպիոններին դիմավորելու էին եկել Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի «Արցախի բալիկներ» համույթի անդամները:

ԱՐՅԱՆՑԻ ՊԱՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈՒՍՏՆԵՐԸ՝ ՀՀ ԶԵՄՊԻՈՆ



Այս օրերին Երևան քաղաքում ընթանում է 2021-2022թթ. ՀՀ բասկետբոլի պատանիների առաջնությունը: 14 հանդիպումից 12-ն ավարտելով հաղթանակով՝ արցախցի պատանի բասկետբոլիստները մինչև 14 տարեկանների առաջնությունից վերադարձել են հաղթանակով: Թիմի մարզիչներն են Անդրեյ Սարունյանը, Գարիկ Սարգսյանը:

ԱՀ ԿԳՄՍՆ

<p>ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 14.05.2022թ.:</p>
--	---	--	---	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: